ՄԿԵԱ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԶԵԿՈՒՅՑ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

EAEA

EUROPEAN ASSOCIATION FOR THE EDUCATION OF ADULTS

ՄԿԵԱ ԿՈՆՖԵՐԱՆՍ- ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Բուդապեշտ, 2 դեկտեմբեր, 2008

Եվրոպական Միության Ուսումնառություն Ողջ Կյանքի Ընթացքում Ծրագրի աջակցությամբ

խմբագրված է ՄԿԵԱ կողմից, դեկտեմբեր 2008թ, նկարները՝ Տամաս ԿՈՎԱՍԻ, Էսզերգոնմի Համալսարան

*Այս նախագիծը հովանավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ: ՄԿԵԱ Կոնֆերանս- ԵՀ Մեծահասակների Կրթության գործողության պլանի" այս հրատարակությունը արտահայտում է միայն հեղինակի տեսակետները, և Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում տվյալ նյութի ինֆորմացիան օգտագործելուց առաջացած հետևանքների համար":

ՄԿԵԱ ԿՈՆՖԵՐԱՆՍ- ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Բուդապեշտ, 2 դեկտեմբեր, 2008

Բովանդակություն 2
Տկն Մարիկե Դասհորսթի ելույթը (Եվրոպական Հանձնաժողով) 7
Մեծահասակների կրթության Գործողությունների պլանի իրագործում 7
Տկն Մարթա Ֆերրեիրայի ելույթը 9
Եվրոպական Հանձնաժողով, EAC-B4 – Մեծահասակների կրթություն; Գրուդտվիգ բաժնի ղեկավար 9
Մեծահասակների կրթության քաղաքականության զարգացման թարմացում 9
Հիմնական գործողություն 1. 13
Անդամ-երկրներում մեծահասակների վրա կրթության և ուսուցման բոլոր ոլորտների բարեփոխումների ազդեցության վերլուծություն 13
Աշխատանքային խմբի զեկույց 13
Լավագույն փորձի օրինակ Հիմնական գործողություն 1. 16
“Ակնկալիքների ստացում” Հունգարական ժողովրդական բարձրագույն դպրոցի հասարակություն (Զոֆիա Ֆեդսբոմ և Զուլի Զաբո) 16
Հիմնական գործողություն 2. 18
“ՄԿ սեկտորում կրթության ապահովման որակի բարելավում” 18
Աշխատանքային խմբի զեկույց 18
Լավագույն պրակտիկայի օրինակ Հիմնական գործողություն 2 20
eduQua – Որակի հավաստում Մեծահասակների կրթությունն 20
ապահովողների համար / Ապահովողների համար 20
Որակի հավաստման լավագույն պրակտիկա (Տկն Ռութ Զերման) 20
Հիմնական գործողություն 3: 21
Մեծացնել մեծահասակների համար «մեկ քայլ վերև» կատարելու հնարավորությունը – ձեռք բերել նախկինում ունեցածից առնվազն մեկ աստիճան ավելի բարձր որակվորում 21
Աշխատանքային խմբի զեկույց: 21
Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 3. 24
Խառը աշխատանքային խմբերի փորձերը – Դիտարկում և խորհուրդ, Բելգիա (Նադիա Բարագոլիա) 24
Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 3. 26
Մեծահասակների կրթության նախաձեռնություններ (‘Kunskapslyftet’) , Շվեդիա (Պրն Բյորն Գերֆելթ) 26
Հիմնական Գործողություն 4. 28
Հմտությունների և սոցիալական կարողությունների մատչելիության գործընթացի արագացում և դրանց վավերացում ու ճանաչում արդյունքների ուսումնասիրման տեսանկյունից 28
Աշխատանքային խմբի զեկուցում 28
Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 4. 31

Ճանաչման ազգային համակարգ: Կարողությունների վավերացում և սերտիֆիկացում. ակադեմիական գործընթացներ (Պրն Կարլոս Ռիբեիրո) 31
Հիմնական Գործողություն 5. 38
Մեծահասակների կրթության ոլորտի մոնիտորինգի բարելավում 38
Աշխատանքային խմբի զեկուցում 38
Լավագույն փորձի օրինակ Հիմնական գործողություն 5. 39
Մեծահասակների կրթության ոլորտի մոնիտորինգի բարելավում. ՄԲ փորձը (Պրն Ալան Թուքեթթ) 39
Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 5. 46
Սլովենիայում Մեծահասակների կրթության Գործողության պլան (Դր. Վիդա Ա. Մոհորչիչ Շպոլար) 46
Եզրակացություն 50

Նախաբան

2006թ. հոկտեմբերին Եվրոպական Հանձնաժողովը հրապարակեց Մեծահասակների կրթության մասին "Երբեք ուշ չէ սովորել" հաղորդագրությունը: Դրան հետևեց 2007թ. "Միշտ էլ հարմար ժամանակ է սովորելու համար" հաղորդագրությունը, որը նախագծում էր 2006թ. հաղորդագրության իրականացման աշխատանքային պլանը, որն էլ 2008թ. մայիսին ընդունվեց Եվրապական Խորհրդի կողմից: ՄԿԵԱ-ն ընդգրկվեց 2006թ. Հաղորդագրությամբ նախանշված կրթության գործընթացի մեջ և առաջարկեց, որ մի շարք գործողություններ ներառվեն ծրագրում: ՄԿԵԱ-ն նաև գլխավորում էր "Մեծահասակների կրթության միտումների ու խնդիրների" ուսումնասիրման գործընթացը, ինչը մեծապես նպաստում էր երկխոսությանը: ՄԿԵԱ-ն նաև հանդիսացել է Եվրոպական Հանձնաժողովի Գործողությունների Պլանի իրականացման Աշխատանքային Խմբի մշտական անդամ:

Իրականում մենք մեծապես ոգևորված ենք Գործողությունների Պլանով, քանի որ այն խոստանում է լինել համաեվրոպական առաջին խթանը առավել լավ, առավել հետևողական և ուժեղ մեծահասակների կրթության և ուսումնառության սեկտորի համար: ՄԿԵԱ-ն ցանկանում է տեղեկացնել և պարբերաբար թարմացնել Գործողությունների Պլանի մասին իր անդամներին տրամադրվող ինֆորմացիան, որպեսզի նրանք կարողանան վերահսկել և քարոզչություն իրականացնել ծրագրի իրականացման մասին ազգային մակարդակով: Մենք նաև ցանկանում ենք Եվրոպական Հանձնաժողովին ներկայացնել լավ փորձի օրինակներ կամ տրամադրել ինֆորմացիա, երբ մեր անդամները ստանում են այնպիսի տպավորություն, որ ծրագրի իրականացումը ճիշտ ուղղությամբ չի գնում:
2008թ. դեկտեմբերի 2-ի կոնֆերանսը հնարավորություն ընձեռեցՄԿԵԱ հնարավորինս մեծ թվով անդամների հավաքել մեկ տեղ և մանրամասն քննարկելու հինգ հիմնական գործողությունները: Մենք դիտարկեցինք այս կոնֆերանսն իբրև մի վայր, որտեղ միասին աշխատելիս «վերևից ներքև» հանդիպեցին «ներքևից վերևին»: Մենք ուրախ ենք, որ Մարթա Ֆերրեիրան և Մարիկե Դասհորսթը կարողացան միանալ մեզ և ներկայացնել Գործողությունների պլանը, դրա իրականացման հետ կապված քաղաքականության զարգացումները: Մեծապես շնորհակալ ենք նաև Ֆիկուս Գրուփսի ներկայացուցիչներին, ովքեր նախապատրաստված էին՝ մեր աշխատանքներին միանալու համար: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ համակարգվում էր ՄԿԵԱ և ԱՀ մեկական ներկայացուցչի կողմից՝ համոզված լինելու համար, որ հետադարձ կապը ընթանալու է 2 ուղղությամբ: Կոնֆերասի ժամանակի ընտրությունը ևս կարևոր էր. այն տեղի ունեցավ նախքան Եվրոպական CONFINTEA-ի VI նախապատրաստական կոնֆերանսը և ՄԿԵԱ մասնակիցների մեծ մասը նախատեսվածից ավելի երկար մնացին CONFINTEA-ի նախապատրսատական աշխատանքներին ևս մասնակցելու համար:
Հուսով ենք, որ Գործողությունների պլանի կոնֆերանսի խորհուրդները և եզրակացությունները կնպաստեն CONFINTEA VI–ի բովանդակությանը և մարտավարությանը: Անշուշտ, մենք շարունակելու ենք հետևել և ուղեկցել Գործողությունների պլանի իրականացմանը: Այս կոնֆերանսն ընդամենը մեկն էր այն մեծաթիվ աստիճանաքարերրից, որոնք տանելու են դեպի

առավել ուժեղ և ավելի լավ կրթության մեծահասկաների համար և ուսումնառության սեկտորի Եվրոպայում ու նրա սահմաններից դուրս:

Ջինա Էբներ
ՄԿԵԱ Գլխավոր քարտուղար

Տկն Մարիկե Դասհորսթի ելույթը (Եվրոպական Հանձնաժողով)

Մեծահասակների կրթության Գործողությունների պլանի իրագործում

Առաջարկվող գործողություններ

- Մեծահասակների կրթության ոլորտում ազգային բարեփոխումների վերլուծություն;
- մատուցման որակի բարելավում;
- մեծահասկաներին նախորդից մեկ աստիճանով ավելի բարձր որակավորում ստանալու հնարավորության մեծացում;
- կարողությունների և մրցունակության վավերացում և ճանաչում;
- նշված սեկտորի առավել լավ և թափանցիկ մոնիտորինգ:

Աշխատանքային խումբ

- Մաքուր մանդատ
- «ակտիվ» մասնակցություն
- տարեկան 3 հանդիպում
- 32 երկիր
- Եվրոպական սոցիալական համագործակցության ասոցիացիաներ
- ՄԿԵԱ
- Համալսարանների եվրոպական ասոցիացիա
- CEDEFOP, ETF և Էրուդիս

5 կիզակետային խմբեր

- Մեծահասկաների կրթությանն առնչվող ազգային բարեփոխումների վերլուծություն
- նախնական ուսուցման վավերացում
- “մեկ քայլ վերև”. մեծահասկաների շրջանում որակավորման մակարդակների ապահովման մարտավարություն
- մեծահասակների կրթության աշխատակազմի հիմնական կարողություններ
- մեծահասակների կրթության սեկտորի բարելավված մոնիտորինգ:

Կիզակետային խմբերի առաջադրանքներ

- յուրաքանչյուր խմբում 5 արտաքին փորձագետ + 3 ներքին փորձագետ
- խորհրդատվական դերակատարում
- աջակցություն նախապատրաստական բոլոր տեսակի աշխատանքներին. վերլուծություն, զարգացման անկետաներ և ցանցեր, դասընթացներ, հավասար գործունեություն:

2008թ. գործողություններ

- Աշխատանքային խմբի և 5 Կիզակետային խմբերի ստեղծում
- Իռլանդիայում գրագիտության հավասար ուսումնառության գործունեություն
- Եզրափակիչ զեկույց. Եվրոպայում մեծահասակների կրթության իրավունքը
- քաղաքականության զարգացման թարմացված զեկույց
- ցանցային գրագիտության և հետազոտության շարունակական զարգացում
- լավագույն փորձի իդենտիֆիկացիա – երկու ինվենտար
- Խորհրդի եզրակացությունը, Եվրախորհրդարանի բանաձևը, Տարածաշրջանային կոմիտեի և Սոցիալ -տնտեսական կոմիտեի կարծիքը
- մոնիտորինգի անկետա

Մեկնարկած 4 ուսումնասիրությունները

- սեկտորի մոնիտորինգի և պարզ լեզվով ու համընդհանուր հասկանալի լինելու համար մեծահասակների կրթությանն առնչվող եվրոպական տերմինաբանության ուսումնասիրություն
- մեծահասակների կրթության աշխատակազմի հիմնական կարողությունների ուսումնասիրություն

- մարդկանց մեկ քայլ վերև բարձրանալու հնարավորություն ընձեռնելու ծրագրի մարտավարության ինվենտար (իմա՝ հասնել մի մակարդակի, որն առնվազն մեկ աստիճանով բարձր է տվյալ պահին ունեցած մակարդակից)
- կրթության ոլորտում վերապաստրաստման և կրթության ոլորտում շարունակաբար ընթացող բարեփոխումների ազդեցության գնահատում:

2009թ. աշխատանքային ծրագիր

- 4 դասընթացներին պետք է հետևել և ամփոփել դրանք
- 2 դասընթաց պետք է սկսել
  - դասավանդողների որակավորման ստանդարտների զարգացում
  - ոչ ֆորմալ կրթության վավերացման լավագույն փորձի համար եվրոպական ինվենտարի թարմացում
- Մասնագիտական տերմինների բառարանի արտադրություն

Հավասար ուսումնառության գործունեություն

- մարտ ամսին Սլովակիայում մոնիտորինգի վերաբերյալ;
- մարտ ամսին Մեծ Բրիտանիայում «մեկ քայլ վերև» շրջանակներում;
- հունիս ամսին Չեխիայում ոչ ֆորմալ կրթության վավերացման կապակցությամբ;
- 2010թ. հունվարին Նորվեգիայում աշխատանքի վայրում ուսումնառության առնչությամբ
- Հունաստանում մեծահասակների կրթության ծառայության ապահովման վերաբերյալ

Տարածաշրջանային 4 հանիդիպում հոկտմեբերին/նոյեմբերին Նորվեգիայում, Իսպանիայում, Գերմանիայում և Սլովենիայում

1 ուսումնական այց

- Տարածաշրջանային մոտեցում Նիդերլանդներում;
- Ցանցային շարունակական աշխատանք;
- քարոզչության զարգացում. ինչպես ծրագրավորել աջակցել մարդկանց;
- լավագույն պրակտիկայի նույնականացման շարունակական աշխատանք;
- շարժական օրակարգի քաղաքականության զարգացում;
- մեծահասակների կրթության ինտեգրումը այլ քաղաքականությունների մեջ;
- ամփոփիչ կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքների սկսում:

Նակր 1. Տկն. Մարիկե Դասհորսթի ելույթը (Եվրոպական Հանձնաժողով)

Տկն Մարթա Ֆերրեիրայի ելույթը

Եվրոպական Հանձնաժողով, EAC-B4 – Մեծահասակների կրթություն; Գրուդտվիգ բաժնի ղեկավար

Մեծահասակների կրթության քաղաքականության զարգացման թարմացում

Ընդհանուր դիտարկում

- ՄԿ Մեմորանդա (2000)
- ՄԿ-ի եվրոպական ծավալների իրականության վերածում (2001)
- ևս 5 տարի նախքան մեծահասակների կրթության հատուկ քաղաքականությունը
- 2006. Երբեք չափազանց ուշ չէ սովորելու համար
- 2007. Միշտ էլ լավ ժամանակ է սովորելու համար. Գործողությունների պլան
- Եվրոպական Խորհրդարանի բանաձևը և Խորհրդի եզրակացությունները

Համատեքստ

- Աշխարհի այլ մասերում կտրուկ զարգացումներ
- 80 մլն ցածր հմտություններ ունեցող աշխատավորներ
- Մոտ 7մլն դպրոցը վաղուց ավարտածներ
- Ժողովրդագրական միտումներ – տարեց հանրություն
- Աղքատություն և սոցիալական բացառում
- Ցածր մակարդակի հիմնական հմտություններ ունեցող մարդկանց բարձր հարաբերականություն (%)

Մեծահասակների կրթության ու ուսուցման նվազող մասնակցություն

2005թ. մեծահասակների կրթությանն ու ուսուցմանը մասնակցած 25-64 տարեկան մաարդկանց մասնակցությունը տոկոսներով (%), ISCED 0-6



Մեծահասակների կրթություն

- Նախնական կրթությունն ու ուսուցումն ավարտելուց հետո մեծահասակներն ընդունել են կրթության բոլոր ձևերը՝ անկախ գործընթացների տևողությունից:
- Սեկտորը ներառում է ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթութուն:

«Երբեք ուշ չէ սովորել»

Հաղորդագրություն մեծահասկաների կրթության վերաբերյալ

Ընդունված 23 հոկտեմբերի 2006թ.

Համընդհանուր հաղորդագրություն
Անդամ-երկրները պետք է ունենան մեծահասակների կրթության արդյունավետ համակարգ՝ ինտեգրված ողջ կյանքի ընթացքում կրթության մարտավարությանը, որն ապահովում է.
- աշխատաշուկայի մատչելիություն
- ավելի լավ սոցիալական ինտեգրում
- ակտիվ մեծահասաների համար ավելի լավ պատրաստվածություն

5 Հիմնական հաղորդագրությունները
- աճող և առավել անաչառ մասնակցություն
- «որակի կուլտուրայի» ուժեղացում
- կրթության արդյունքների ճանաչում և վավերացում
- հատուկ ուշադրություն փախստականներին, մեծահասակներին, նախկին շրջանավարտներին, կանանց և հաշմանդամներին
- առաջընթացի չափում:

<u>“Միշտ էլ լավ ժամանակ է սովորելու համար”</u>

Մեծահասակների կրթության Գործողությունների պլանի մասին Հաղորդագրություն

Ընդունված 27 սեպտեմբերի 2007թ.
Համընդհանուր նպատակ
Իրականցնել 2006թ. Հաղորդագրության իրականացման հիմնական հաղորդագրությունները և զարգացնել մեծահասակների կրթության սեկտորը:

Մեծահասակների կրթության արդյունավետ սեկտոր
- <u>Քաղաքականություն</u>. տնտեսության և հասարակության պահանջների բավարարում
- <u>Կառավարում.</u> որակ, արդյունավետություն և պատասխանատվություն
- <u>Տարածում.</u> մատչելիություն, վավերացում և ճանաչում, սովորողի և սովորեցնողի միջև առավել սերտ կապեր, ֆինանսական աջակցություն

Գործողությունների պլանի կիզակետերը
Նրանք, ովքեր տուժում են հետևյալ պատճառներով.
- Գրագիտության ցածր մակարդակ
- Անհամապատասխան աշխատանքային կարողություններ
- Անբավարար հմտություններ հասարակության մեջ հաջողությամբ ինտեգրվելու համար

Առաջարկվող գործողություններ
- Մեծահասակների կրթության ազգային բարեփոխումների վերլուծություն
- Զարգեցնել որակի ապահովումը
- Մեծացնել մեծահասակների հնարավորությունը ձեռք բերելու որակավորում, որը մեկ աստիճանով ավելի բարձր է, քան նախկինում ունեցածը
- Հմտությունների և կարողությունների վավերացում և ճանաչում

- Սեկտորի ավելի լավ և առավել թափանցիկ մոնիտորինգ

Մածահասակների կրթության գործողությունների պլանի հետևում
- Խորհրդի 2008թ. մայիսի 22-ի Եզրակացություններ
- Եվրոպական Խորհրդարանի բանաձև
- Տարածաշրջանային կոմիտեի կարծիք
- Սոցիալ-տնտեսական կոմիտեի կարծիք

Խորհրդի եզրակացությունը
- Հիմնական հարցերի վերաբերյալ ուժեղ փոխհամաձայնություն
- Մանդատ Հանձնաժողովին
- Մանդատ Անդամ-երկրներին

Մանդատ Հանձնաժողովին
- Ազգային որակավորումների վերլուծություն
- Սեկտորում ֆինանսավորման բաշխման վերլուծություն
- Մեծահասակների կրթությամբ մասնագիտության ընձեռում
- Կրթությունն ապահովողների համար որակի չափանիշների զարգացում
- Սահմանափակված խմբերի վերաբերյալ ծրագրերի լավագույն պրակտիկա
- կարողությունների վավերացման կոնկրետ մոտեցումներ
- Մեծահասակների կրթության համար ընդունված տերմինաբանություն
- Ողջ կյաքնի ընթացքում ուսումնառության ազգային մարտավարություններում մեծահասակների դերի ուժեղացում
- Քարոզչության աջակցություն՝ պահանջարկը մեծացնելու նպատակով

Մանդատ Անդամ-երկրներին
- Շահագրգիռ կողմերի միջև փորձի փոխանակում
- Մեծահասակների կրթության արգելքների վերացում
- Կրթության ապահովման որակի բարձրացում
- Մեծահասակների մոտ բարձրագույն կրթության և Մասնագիտական կրթության և ուսուցման դերի մեծացում
- Մատչելիություն, մասնակցության բարձացում
- Մեծահասակների կրթությունը բարձրացնելու նպատակով Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության և ESF գործիքների օգտագործում
- Ողջ կյանքի ընթացքում ուղղորդման խթանում
- Սոցիալական համախմբվածությունը խթանելու նպատակով Մեծահասակների կրթության օգտագործման ծախսի, եկամուտի ուսումնասիրություն
- Հիմնական հմտություններն ու կարողությունները վավերացնելու և խթանելու մեթոդների զարգացում
- Մեծահասկաների համար ֆինանսավորման համապատասխան բաշխումն ապահովելու ջանքերի գործադրում
- Սոցիալական համգործակցության և հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցության խթանում՝ ներառյալ ICT –ի կիրառում
- CEDEFOP-ի և Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ՅՈՒՆԵՍԿՈ-ի ինստիտուտի հետ համագործակցության ուժեղացում և միջազգային կազմակերպությունների կողմից հետազոտության հնարավորությունների մշակում
- 2010թ. հետո հետագա հնարավոր գործողությունների հաշվի առնում, որը կհամապատասխանի “Կրթություն և ուսուցում 2010”-ի արդյունքներին

Առավել մանրամասն տեղեկությունների համար
Adult Learning Policy:
http://ec.europa.eu/education/policies/adult/index_en.html
http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc58_en.htm

Նկար 2. Մարթա Ֆերրեիրայի ելույթը (Եվրոպական Հանձնաժողով)

Հիմնական գործողություն 1.
Անդամ-երկրներում մեծահասակների վրա կրթության և ուսուցման բոլոր ոլորտների բարեփոխումների ազդեցության վերլուծություն
Աշխատանքային խմբի զեկույց

Նախագահ. Բելազ Նեմեթ և Կատարինա Պոպովիչ
Լավագույն փորձի օրինակ. Հունգարիա – Զոֆիա Ֆեդսբոմ և Զուլի Զաբո
Գրառում կատարող – Զաֆիա Ֆեդսբոմ և Զուլի Զաբո

Նախ և առանջ, կարևոր է նշել, որ աշխատանքի առաջին փորձը սկսվեց Գործողության պլանի (կարճ՝ ԳՊ) շուրջ ընհանուր բանավեճով՝ այն բանից հետո, երբ համառոտ ներկայացվեց ԳՊ-ն և նրա կառուցվածքը: Երկրորդ փուլում ներկայացվեց Հունգարիայի լավագույն պրակտիկան, և քննարկումը շարունակվեց:
ԳՊ-ի վերաբերյալ ընդհանուր տեսակետն այն էր, որ այն փակ էր և չէր առնչվում աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին, կամ, այլ բառերով ասած, այն ակնհայտորեն որևէ կերպ չէր առնչվում տարածաշրջանային և գլոբալ վերջին փոփոխություններին և մարտահրավերներին, որոնք ազդում են այն միջավայրի վրա, որտեղ ծրագիրն իրականացվելու էր: Այս դիտողությունը նշում է ԳՊ-ի բացակայող այն դրույթները (բաց թողած հայացքը): Տկն Ռիվա Ավադը նշեց նման փաստաթղթում դրույթների կարևորությունը՝ սահմանելու համար խաղաղության հաստատման անհրաժեշտություն, միջմշակութային հասկացողությունն ու միմյանց համար բաց լինելը զարգացնելու և քաղաքացիության համար: Հաղորդագրության մեջ նշված է նման բան, սակայն ԳՊ-ի ուշադրությունից դուրս են մնացել նման հարցերը:
Տկն Կատարինա Պոպովիչը նշեց մի քանի այլ տարրեր, ինչպես, օրինակ, միգրացիան: Նրա դիտողությունը հարցը բերեց աշխարհագրական մեկնաբանության, այսինքն՝ ԳՊ-ն արդյոք միայն ԵՄ համար է, թե միացյալ, ընդլայնված Եվրոպայի համար, ինչը վերաբերվում է, օրինակ, միգրանտերի խնդրին: Պրն Տիմոտե Վայոլետին ևս նշեց միգրանտների գլոբալ խնդիրը՝ ըստ խաղաղօվկիանոսյան շրջանի՝ նշելով այն հակասությունը, որը կառավարությունները փորձում են զարգացնել՝ մարդկային կապիտալը և սոցիալական համախմբվածությունը, մինչդեռ կապիտալը գալիս է մեկ այլ տեղից: Այս կետով բարձրացվեց այն հարցը, թե արդյոք ԳՊ-ն կարող է առավել ակնհայտորեն ազդել գլոբալ միտումների և փոփոխությունների վրա և ունենալ աավել հստակեցված ԳՊ, որը գործի կդրվի 2009թ. CONFINTEA VI-ի հետ միաժամանակ և դրանից հետո:
Պրն. Լևան Կվատչաձեն Վրաստանից բարձրացրեց հավասարակշռության խնդիրը և նշեց փաստաթղթի տնտեսական ուղղվածությունը: Նաև պրն. Լ.Կվաչաձեն խոսեց ԳՊ-ի գործողությունների զարգացումների և չափումների հետ կապված դժվարությունների մասին: Տկն. Ռենատա Հաաս-Բեկը Լիխթեյնշտայնից ներկայացրեց փաստաթղթեր հավաքելու խնդիրը, որը տեղի է ունենում մասնակցության ապահովման և զարգացման փոխարեն: Ուստի, սոցիալական մասնակցությունը պետք է զարգացվի կառավարությունների ներքին / արտաքին և միջսեկտորային ձևերով (կրթություն, հասարակական հարաբերություններ, աշխատաշուկա, առողջապահություն, ընտանեկան հարաբերություններ և այլն)՝ փոխանակ զարգացնելու առկա հարցերի ձևակերպումը և պատասխանների հավաքումը Մեծահասակների կրթության և ուսուցման ոլորտում (ALE/ ՄԿՈՒ):
Աշխատանքի մասնակիցների մեծ մասը համաձայնեց, որ ԳՊ-ն պետք է լինի մեծահասակների կրթությունն և ուսուցումը ԵՄ-ում և ԵՄ ոչ անդամ երկրներում զարգացնելու գործիք,և մատնանշեցին այն հիմնական դերը, որ պետք է կատարեն կառավարությունները, ԵՀ-ն, Եվրախորհրդարանը և Նախարարների խորհուրդը, որոնք ստիպված կլինեն աշխատել առավել փոխհամաձայնեցված՝ իրականցման և կրթության ու ուսուցման ընդհանուր նպատակների համար:

Կարծում եմ, որ հունգարական փորձի օրինակը մի գերազանց ջանք էր՝ առաջացնելու ազգային հետաքրքրություն ՄԿ և ուսուցման ԳՊ-ի հանդեպ, և ՄԿ և ազգային ուսուցման շրջանակներում փոփոխությունները խթանելու համար: Ոչ միայն աշխատանքային մեթոդը, այլև յուրաքանչյուր գործունեություն (օր.՝ Քայլ 2 ԳՊ-ի վերաբերյալ տարածաշրջանային կոնֆերանսների և լավագույն պրակտիկաների հավաքագրում; Քայլ 3՝ կապված CEE երկրներում ՄԿ և ուսման փորձերի հավաքագրման հետ) առավել ուղղորդված հայացք է արտահայտում, որը կենտրոնացված է ոչ ֆորմալ ՄԿ-ի խթանման և մշակման վրա: Հունգարական հավաքական նախագծերի հանձնարարականները շատ մտահոգիչ էին՝ համաձայն աշխատանքային նոր մեթոդների վավերացման, ոչ ֆորմալ ՄԿ-ի վրա փոփոխվող ուշադրություն, նորացված օրենսդրության պահանջի, աշխատանք-փորձ և գիտելիք-ազդեցություն: (Տկն Ջուլիա Զաբոն և տկն Զոֆիա Ֆեդսբոմը ներկայացրեցին PPT ֆայլերի սլայդեր)

Ինչպե՞ս ազդել քաղաքականություն իրականացնողների վրա՝ ՀԿ-ների որոշում ընդունողներից մինչև հետազոտողները: Այս հարցը բարձրացրեց տկն. Ռենատա Հաաս-Բեկը, ով նշեց, որ ԳՊ-ն ընդամենը մի գործիք է՝ տեսնելու, թե ինչ է տեղի ունենում երկրում: Տկն. Ֆեստբոմն ընդգծեց, որ հունգարական համազգային պրակտիկայի նախագծային աշխատանքի և քննարկման շարքի եզրակացությունը ԳՊ-ն կդարձնեն մի գործիք, որը կխթանի ՄԿՈՒ-ի շրջանակներում նոր օրենսդրության ստեղծումը և կուժեղացնի ոչ ֆորմալ ՄԿ-ի ցանցային աշխատանքի, լեզուներ սովորելու դերը՝ որպես հիմնական կարողությունները զարգացնելու մի մաս, և կմեծացնի ՄԿՈՒ համընդհանուր ֆինանսավորումը:

Մասնակիցները քննարկեցին ՄԿՈՒ վերաբերյալ օրենքի անհրաժեշտության հարցը և նշեցին ցանցային աշխատանքի կարևորությունը և ՄԿՈՒ-ի ապահովման համակարգերի նորացման կարիքը: Եղան նաև քննադատական հարցեր՝ կապված ոչ ֆորմալ ՄԿ-ի, լեզուներ սովորելու և հիմնական կարողությունները զարգացնելու հետ: Կամ, վրացի գործընկերը հարցի տակ դրեց օրենքի իդեալական դերը, բայց մեր իսրայելցի գործընկերը պաշտպանեց ՄԿՈՒ-ի համր օրենքի դերը և անհրաժեշտությունը: Սերբիայից տկն. Պոպովիչը առարկեց, թե ՄԿՈՒ-ի մասին օրենքը կարող է միայն կարգավորիչ լինել և կարող է օգնել վստահության աճին, այդուհանդերձ, այն կարող է լինել հակաարդյունավետ՝ թե քանակի, թե որակի առումով:

Դրանով հանդերձ, հիմնական հարցը մնաց փոխանակման և երկխոսության համար աղբյուրների ստեղծումը, ամրապնդումը և աջակցությունը: Մասնակիցները մտածեցին և համաձայնեցին, որ անհրաժեշտ է մշակել հասարակ ձևեր կոնֆերանսների, սեմինարների, ընդհանուր դասընթացների նախաձեռնությունների I-net-ի վրա հիմնված ցանցային աշխատանքների և այլնի համար:

Մեկ այլ հարց, որը բարձրացվեց, ապակենտրոնացումն էր, որը աշխատանքի մասնակիցների կողմից ճանաչվեց որպես հիմնական մոտեցում և փորձ, որպեսզի ՄԿՈՒ-ն շարունակի լավ փորձով, ինչպես օրինակ, ուսումնասիրել շրջանները, քաղաքները, Սոկրատ և Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ինտեգրված ծրագրերը և խթանել ՄԿՈՒ ուսումնասիրությունը ավելի լավ, առավել արդյունավետ: Ֆինանսական և/կամ աջակցության հասարակական մեթոդներով, առավել պրակտիկ օրենսդրությամբ և պահանջներով առաջնորդվող կրթության ապահովմամբ:

Ուստի, չափազանց կարևոր է ոչ միայն ուսումնասիրողների և փորձարկողների, այլ նաև մեծահասակների համար, որ լավագույնս կիրառեն առկա փորձը, նախագծերը, վերածեն դրանք ՄԿՈՒ-ի կայուն ձևերի: Այդ նպատակների համար ԵՀ-ն պետք է խորհրդակցի ոչ միայն Անդամ-երկրների, այլև թեկնածու երկրների և նրանց ենթազգային մակարդակների շրջանների, քաղաքների հետ՝ ակնկալելով առավել լայն միջազգային ազդեցություն սոցիալական, քաղաքական և տնտեսական կառույցների վրա:

Նկար 3: Առաջին հիմնական գործողության աշխատանքային խումբ.

Լավագույն փորձի օրինակ Հիմնական գործողություն 1.
"Ակնկալիքների ստացում" Հունգարական ժողովրդական բարձրագույն դպրոցի հասարակություն (Զոֆիա Ֆեդսբոմ և Զուլի Զաբո)

- Սկսվել է 2007թ.նոյեմբերին
- Հիմնական նպատակն է ծանոթացնել հունգարական մասնագիտական հաստատություններին, որոշում ընդունողներին և կառավարական մարմիններին ՄԿ գործողության ծրագրի հետ
- Հունգարիայից հավաքել ՄԿ-ի լավագույն պրակտիկայի օիրնակներ
- Պարբերաբար նամակներով տեղեկացնել հունգարական մասնագետներին զարգացման աշխատանքների մասին

Քայլ 1.
ՄԿ հունգարացի մասնագետների համար երկօրյա դասընթացների կազմակերպում Բալատոնզեպեզդում՝
- քննարկելու ազգային ԳՊ-ի պլանավորման գործընթացը
- ուղղորդելու լավագույն փորձի հավաքագրումը
- մասնակիցներ՝ 14 հոգի. ՄԿ մասնագետներ, որոնք ներկայացնում են երկրի տարբեր շրջանները

Քայլ 1.
- 7 շրջանային մասնագիտական հանդիպումների կազմակերպում՝ խնդիրը ներկայացնելու և քննարկելու ԳՊ-ն, որպեսզի որոշեն հիմնական խնդիրները
- նպատակային խմբեր. յուրաքանչյուր շրջանից 100 մարդ
- 7X1 օր ֆորում
- լավագույն պրակտիկայի շրջանային հավաքագրման ներկայացում
- լավագույն պրակտիկայի սովորողների և սովորեցնողների հետ հանդիպելու հնարավորություններ

Քայլ 3.
Միջազգային մասնագիտացված ուսուցում և գործունեություն Հունգարիայում
Նպատակ. CEE երկրների մեծահասակների որակավորման համապատասխանության դասընթացի պրակտիկա և ծանոթացում ԳՊ-ի հունգարական պրակտիկայի հետ՝ խրախուսելով պլանավորման գործընթացը

Նպատակային խմբերը. CEE երկրների փորձագետներ և ներկայացուցիչներ ՄԿԵԱ ներկայացուցիչներ

Մինչ օրս ունեցած արդյունքները
- 1200 հասցեատերերին տրված 5 ծանուցում
- լավագույն փորձի հավաքագրման հրապարակում
- ՄԿ-ի մեջ մասնագիտացված գրքերի հավաքագրում

Նկար 4:Սյու Վադինգտոն (EAEA նախագահ) և Մարթա Ֆենեյրա (ԵՀ)

Հիմնական գործողություն 2.
"ՄԿ սեկտորում կրթության ապահովման որակի բարելավում"
Աշխատանքային խմբի զեկույց

Նախագահ. Հելեն Քյոհ և Էվա-Ինկերի Սիրելիուս
Լավագույն փորձի օրինակ. Շվեյցարիա – Ռութ Ջերման (SVEB)
Գրառում կատարող –Վալենտինա Չանինա

Աշխատանքային խումբը ղեկավարում էր ԳՊ կիզակետային խմբի անդամ տկն. Հելեն Քյոհը՝ Իռլանդիա, և տկն. Էվա Ինկերի Սիրելիուսը՝ Ֆինլանդական ՄԿ ասոցիացիայի գլխավոր քարտուղար, Ֆինլանդիա

Խմբի կողմից ֆոկուսի նոր կարևոր կետեր

Քայլ 1. Հիմնական գործողություն 2-ի սահմանում և կազմակերպման ազգային և շրջանային տեսակետների հիմքեր
Քննարկումը կենտրոնացված էր ԵՀ-ի ԳՊ-ի վրա և ԵՄ ու ոչ ԵՄ երկրների միջև փորձի փոխանակման վրա:
Հայաստանը, Խորվաթիան և Սերբիան հայտնեցին, որ իրենք սովորաբար ՄԿ-ի համար Միջազգային ուսուցման ասոցիացիայից ավելի մեծ աջակցություն են ստանում, քան իրենց կառավարություններից: Հայտարարեցին, որ Շվեյցարիայում ՄԿ-ն ավելի քիչ է զարգացած, քանի որ, օրինակ, 4 պաշտոնական լեզուների ներկայությունը աշխատում է առանձին-առանձին: Հունգարիայում ՄԿ-ի մասին հատուկ օրենսդրական կանոնավորմանը կառավարությունը լիազորված է սահմանելու ՄԿ-ի և ուսուցման ծրագրերի հետ առնչվող հաստատությունների որոկավորման կանոնները, մասնավորապես՝ ՄԿ-ի նախագծերին ֆինանսական աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների համար: Աշխատանքի նախարարությունը հիմնել է ՄԿ-ի Հավատարմագրման խորհուրդ՝ որպես անկախ մարմին, որի անդամները նշանակվում են նախարարի կողմից: ՄԿ գործունեություն կարող են ծավալել միայն գրանցված հաստատությունները կամ ասոցիացիաները: Թեև Խորվաթիայում և Սերբիայում ՄԿ-ն պաշտոնապես հանդիսանում է կրթական համկարգի մի մասը, այդուհանդերձ, ՄԿ-ի հարաբերությունները հստակ չեն: Ուստի, փորձագետներն ու մասնագետները հանձն են առել ոչ պաշտոնական կրթական իրականացման խնդիրները: Խորվաթիայում ԳՊ-ն ընունեվել է 2005թ. և 2006թ.:
Կարճատև քննարկումից հետո խումբը կենտրոնացավ հետևյալ կետերի վրա.
- միջին դասեր
- սոցիալական գործընկերներ
- տեխնիկական շրջանակներ

Աշխատանքային խմբի **Քայլ 2**-ը Շվեյցարիայում լավագույն փորձի ներկայացումն էր տկն. Ռութ Ջերմանի կողմից՝ "EduQua- Որակի թափանցիկությունը, համատեղելիությունը ՄԿ-ում"

Քայլ 3. Տկն. Ջերմանի կողմից eduQua նախագծի ներկայացումը ոգեշնչող էր, և դրանից հետո հերթը տրվեց մասնակիցների մեկնաբամնություններին և հարցերին: Դրան հետևեց այս աշխատանքային խմբի կողմից 3 կոնկրետ գաղափարների կարճ զեկուցումը, որը ներկայացրեց տկն. Մարիա Մաթեիդեզը՝ Լեզուների բարձրակարգ ծառայությունների եվրոպական ասոցիացայից (EAQULS):

EAQULS-ի կարճ ներկայացումից հետո, որը եվրոմակարդակով լեզվի ուսուցման եվրոպական որակավորման ասոցիացիան է, այս քննարկումը կենտրոնացավ ԵՀ-ի ԳՊ-ի վերաբերյալ կոնկրետ գործողությունների, հանձնարարականների վրա:

Հիմնական դրույթը ՄԿ-ում **թափանցիկության** խթանումն էր և գործողությունների կենտրոնացումը 3 հիմնական ոլորտներ շուրջ, որոնք բոլորն էլ լիովին համապատասխանում են ԳՊ-ի 2010թ. գործողությունների դրույթներին:

- կատարել եվրոպական երկրներում տեղական և տարածաշրջանային մակարդակով առկա որակի հավաստման և որակի վերահսկման համակարգերի համակողմանի ուսումնասիրություն և որոշել լավ պրկտիկայի հետագա օրինակները
- ընդունել սովորողի վրա կենտրոնացված մոտեցում և կրթություն ապահովողների որակի չափանիշների վրա կենտրոնանալու փոխարեն կենտրոնանալ սովորողների և սովորեցնողների համայնքների որակի չափանիշների ձևավոնրման վրա՝ թափանցիկ և ընկերական ճանապարհներով՝ խթանելու համար որակի թափանցիկությունը և հասկանալու ՄԿ իրական արժեքները
- ձգտել համագործակցության այլ եվրոպական և ազգային կազմակերպությունների հետ՝ զարգացնելու համար վերոնշյալ չափանիշը, օրինակ՝ UNESCO, Եվրախորհուրդ:

Նկար 5: Երկրորդ հիմնական գործողության աշխատանքային խումբ.

Լավագույն պրակտիկայի օրինակ Հիմնական գործողություն 2

eduQua – Որակի հավաստում Մեծահասակների կրթությունն ապահովողների համար / Ապահովողների համար

Որակի հավաստման լավագույն պրակտիկա (Տկն. Ռութ Ջերման)

eduQua-ն ստեղծվել է 2000թ. և սահմանել է Մեծահասակների կրթության (ՄԿ) ոլորտում կրթությունն ապահովողների համար 6 նվազագույն չափանիշներ: Ահա այն նպատակները, որոնց համար eduQua-ն իրականացվեց.

- մշտական մասնակիցների համար թափանցիկության բարելավում
- մեծահասակների շարունակական կրթության հաստատությունների որակի պաշտպանում և զարգացում՝ նվազագույն ստանդարտները հաշվի առնելով
- հիմք ստեղծել կառավարական որոշումների համար (օժանդակության պահանջներ)

eduQua-ն սահմանում է որակի 6 չափանիշ, որոնք էական են որևէ հաստատության որակը որոշելիս.

- դասընթացների առաջարկներ, որոնք բավարարում են կրթության պահանջներին և մասնագիտական կրթության կարիքներին
- մասնակիցների համար զգալի կրթական հաջողություններ
- դասընթացի առաջարկի և առաքելության սահմանման թափանցիկություն
- ապահովել այնպիսի ծառայությունների մատուցում, որոնք կողմնորոշված են դեպի մասնակիցները, տնտեսող են, որակյալ և արդյունավետ
- այնպիսի դասավանդողների ընդգրկում, որոնք համապատասխանում են տեխնիկապես, մեթոդաբանությամբ և բարոյական առումով
- որակի հավաստման և զարգացման մասին տեղեկացվածություն:

Սերտիֆիկացման գործընթացը որակի այս 6 չափանիշների վրա կառուցում և սահմանում է այն նվազագույն չափանիշները, որոնց պետք է համապատասխանել: eduQua-ի վկայականն ուժի մեջ է 3 տարի: Վկայականն ստանալուց հետո 1 կամ 2 տարի հետո սերտիֆիկատը տրամադրողների կողմից անցկացվում է միջանկյալ ստուգում: eduQua վկայականի արժեքն է CHF 3050:

Մինչ այժմ Շվեյցարիայում վկայագրվել են 880 հաստատություններ: Բացի դրանից, մի քանի հաստատություններ էլ կան Ավստրիայում, Գերմանիայում, Լիխթենշտայնում և Ֆրանսիայում: Ավստրիայում նույնիսկ կա eduQua վկայական, որն օգտագործվում է որպես սուբսիդավորման հիմք: eduQua-ն գնալով ավելի մեծ կարևորություն և ընդունելություն է ստանում եվրապական երկրներում:

Սկզբում eduQua-ն պատկանում էր երկու Նախարարությունների, այժմ eduQua-ն աշխատում է որպես գործակալություն, որն ամուր կապեր ունի սերտիֆիկացնող մարմինների հետ, որոնք պատասխանատու են սերտիֆիկացման համար: Ի հավելումն, կա նաև խոսնակ մարմին՝ Մեծահասակների կրթության ոլորտում բոլոր կարևոր դերակատարներով (նախարարներ, Վկայագրող մարմիններ, կանտոններ և SVEB, որը հովանավոր կազմակերպությունն է ապահովողների համար):

---

eduQua Agency, Oerlikonerstrasse 38, CH-8057 Zьrich
T. +41 (0)44 311 64 55 / F. +41 (0)44 311 64 59
eduqua@alice.ch, www.eduqua.ch

Հիմնական գործողություն 3:
Մեծացնել մեծահասակների համար «մեկ քայլ վերև» կատարելու հնարավորությունը – ձեռք բերել նախկինում ունեցածից առնվազն մեկ աստիճան ավելի բարձր որակվորում Աշխատանքային խմբի զեկույց:

Նախագահ: Մարիկե Դասհորսթ և Բյուրն Գարֆելթ
Լավագույն փորձի օրինակ: Բելգիա – Նադյա Բարագիոլա, Շվեդիա – Բյուրն Գարֆելթ
Գրառում կատարող: Ջինա Էբներ

Ներկա էին Շվեդիայի, Նեդեռլանդների, Հունգարիայի, Իսրայելի, Լիտվայի, Մոլդովայի, Սերբիայի, Լատվիայի և Բելգիայի ներկայացուցիչները: Մարիկե Դասհորսթը բացատրում է, որ այս աշխատանքը կլինի իրականացման վրա կենտրոնացած մի կոնկրետ մոտեցում, որն էլ ամենաէականն է:

Հարց առաջին. Գոյություն ունի՞ արդյոք մեծահասակների կրթության ազգային պլան, և ովքե՞ր են հիմնական կազմակերպիչները: Դուք տեղյա՞կ եք ԵՄ այս գործողության գոյության մասին:

Իսրայել. Գործողության ազգային պլանը գոյություն ունի 1948թ. սկսած; չափազանց շատ փախստականներ կան՝ ամենաբարձր որակավորում ունեցողներից մինչև ընդհանրապես գրագիտություն չունեցողներ; տնտեսական թռիչքի արդյունքում ջանքեր են թափվում մեծահասակների կրթության ոլորտը վերացնելու համար, բայց հուսով ենք, որ դա տեղի չի ունենա:

Նեդերլանդներ. Քննարկումներ են գնում ազգային և եվրոպական գործողությունների պլանի միահյուսվածք ստեղծելու մասին, սակայն եվրոպական նպատակների և իրականում առկա վիճակի միջև տարբերությունը հսկայական է: Հետազոտողների փորձագիտական հանդիպում; մեծ տարբերություն կա քաղաքականության մակարդակում առկա վիճակի և այն բանի միջև, թե ինչպես են ապահովողները /պատասխանատուները ընկալում/ հասկանում; ավելի մեծ ճնշում կառավարությունների վրա՝ տեղեկատվության և իրականացման համար:

Բելգիա. Գոյություն ունի այսպես կոչված միջգերատեսչական կոնֆերանս, որը պատասխանատու է մեծահասակների կրթության համար; Կրթության և մշակույթի նախարարությունը աջակցում է մեծապես; կոնֆերանսը կազմակերպվում է տարին մեկ անգամ՝ քննարկելու գրագիտության մակարդակի հետ կապված իրավիճակը; բացակայում է փախստականների կրթության քաղաքականությունը:

Սերբիա. Բարեփոխումները ուշ են սկսվել; Գործողությունների պլանի համար պատասխանատու մարմինը Ֆինանսների նախարարությունն է; մարտավարության ծրագիրը հաշվի է առնում գործողությունների պլանը; հետագա 5 տարիների համար. նախատեսվում է ստեղծել Մեծահասակների կրթության ազգային խորհուրդ; սերտիֆիկացում և լիցենզավորում, պետական մարմնի ստեղծում; նոր կրթական հաստատություն է հիմնվել - ֆորմալ կրթություն, բայց նաև շարունակում է մասնագիտական և մեծահասակների կրթությունը, կազմակերպիչները քննարկում են խնդիրները, ֆինանսավորման հարցը և այլն: Մրցակցություն է գնում Կրթության և Զբաղվածության նախարարությունների միջև, նոր մարմին է ստեղծվել նախարարությունների միջև առկա իրավիճակը կարգավորելու համար:

Լատվիա. Կրթության, Ֆինանսների և Բարեկեցության նախարարություններն են կրում պատասխանատվությունը, և ազգային պլանն ընթանում է իր հունով:

Լիտվա. ունի ազգային պլան և իրագործման ռազմավարություն:

Մոլդովա. Միգրացիան մեծ խնդիր է – խառնաշփոթ իրավիճակ – պլան գոյություն չունի, միայն մասնագիտական ուսուցման համար է:

Շվեդիա. Առակ են իրականացվող և ֆինանսավորվող լավ պլաններ:

Հունգարիա. Գոյություն ունի գործողությունների ազգային պլան – մրցակցություն նախարարությունների միջև, որը երբեմն խնդրահարույց է դառնում; թղթի վրա լավ է ամեն ինչ, սակայն իրականացումը բացակայում է:

- Էական է միացյալ կազմակերպչական մոտեցումը; տարբեր նպատակների և ողջ կյանքի ընթացքում ուսումնառության տարբեր ոլորտների և ուղղությունների միջև հավասարակշռությունը:
- Մեկ քայլ վերև կատարելը և մեկ աստիճան բարձր որակավորում ստանալը պետք է դառնա իրավունք:

Հմտությունների ընդունումը ևս կարևոր է; կիզակետում ցածր հմտությունների տեր աշխատավորներն են. որպեսզի նրանք դառնան աշխատունակ, գտնեն իրենց ուղին, ավելի լավ զգան; վավերացումը ևս կարևոր է:

Հարց երկրորդ. Ի՞նչ եք անում / առաջարկում դուք ձեր կազմակերպությունում

Բելգիա. Անհրաժեշտ է ընդհանուր մոտեցում, շատ համակողմանի – մարդիկ ավելի շատ հմտությունների կարիք ունեն, քան պարզապես գրել-կարդալն է:

Սերբիա. Գոյություն ունի մասնագիտական և մեծահասակների կրթության խորհուրդ; երբեմն միակ նպատակը տնտեսական իրավիճակի բարելավումն է; Հռոմի համար մեծահասակների հիմնական կրթության ուսումնական պլանի փոփոխում;

Լիտվա. Կամավորությունը երիտասարդ մարդկանց համար կարող է ապահովել հմտություններով; Վերապատրաստումներ են անցկացվում նաև կամավորների համար

Իսրայել. մասնագիտական կրթությունը կարող է ապահովել նաև այլ հմտություններ, ինչպես օրինակ, սոցիալական հմտություններն են

Բելգիա. 4 հիմնական ոլորտներ. գրագիտություն, դասավանդողների և աշխատակազմի վերապատրաստում, հարցումներ և հետազոտություն, գրագիտության մասին տեղեկացվածության բարձրացում; այժմ նրանք ունեն սովորողների ակախ խմբեր, որոնք հիմա աշխատում են; զավեշտալի մի գիծ, թե ինչպես են նրանք դարձել գրագետ – դպրոցներ են ուղարկում համալսարանների և միջնակարգ դպրոցների մասին CD-ներ: Հիմնական հմտությունների ցանցային աշխատանքներ – կառավարություններն են առաջարկելու ապահովողի թեկնածությունը, ինչը հրաշալի կապված է ազգային ցանցային աշխատանքների հետ: Էական են վերապատրաստումները, մոնիտորինգը և այլն:

Նեդերլանդներ. աշխատել սովորողերի հետ ինչպես դեսպաններ՝ բարձրացնելով տեղեկացվածությունը:

Հունգարիա. նախագիծ, որի նպատակն է ստեղծել տեղական կրթական կենտրոններ միմյանցից հեռու գտնվող վայրերում; օր.՝ օգնել մարդկանց անմիջապես – ֆերմերներին, ովքեր դիմումները

պետք է լրացնեն Ինտերնետով – դասընթացները կազմակերպվեն մարդկանց առավել մոտ; տեղական զարգացման պլանի և Մեծահասակների կրթության հետ դրանց կապի հետազոտում:

Տարբեր խմբերի թեմաներ.

- Կրթություն պարերի և խաղերի միջոցով – մասնակիցները հասկանում են, որ իրենք բաց են նաև այլ բաների համար, ոչ միայն տեսության
- Երկու հիմնական կետերն են՝ մատնանշել տարբեր խմբերի պահանջները նախնական մակարդակում: Կրթական ծրագրերը պետք է կազմակերպվեն որպես ապրանք, և արժեքը պետք է կազմի ծրագրի մի մասը:
- Որպես ակտիվ պետք է դիտարկել ոչ թե մարտահրավերները, այլ տարբերությունները
- Ակնհայտ է, որ Մեծահասակների կրթությունը իրական ազդեցություն ունի տնտեսական, աշխատանքի, սոցիալական, անհատական և այլ բարեկեցության վրա:
- Խորհուրդ է տրվում սովորողներից հավաքագրել պատմություններ այն մասին, թե ինչպես է կրթությունը / ուսուցումը բարելավել իրենց կյանքը.
- Սովորողների վրա կենտրոնացված մոտեցում և այն դերակատարումը, որ սովորողները կարող են խաղալ, օր.՝ որպես դեսպաններ:

Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 3.
Խառը աշխատանքային խմբերի փորձերը – Դիտարկում և խորհուրդ, Բելգիա (Նադիա Բարագոլիա)

Վեջին մի քանի տարիների ընթացքում 'Lire et Ecrire' ծրագիրը կազմակերպել է սեմինարներ, որոնցում գրագիտություն չունեցող և գրագետ մարդիկ աշխատում էին միասին:
Lire et Ecrire Communauté Française"-ն համախմբեց այն մարդկանց, ովքեր ընդգրկված էին այս սեմինարներում:
Իրականում, արդեն ժամանակն է եզրակացություններ կատարելու այս փորձերից և ամփոփել դրանք՝ ցույց տալու համար սեմինարների նպատակները:
Այս փորձերի համար ընդհանուր էին.

- Զգույշ վերաբերմունք ժողովրդագրական մոտեցմանը;
- Հիմնական կրթության և Հետագա կրթության զարգացման գաղափարներ;
- Կենտրոնացվածություն ինքնավերափոխման, ուրիշների, շրջակա միջավայրի և հասարակության վերափոխման վրա;
- Մեծ ներդրում արվեստագետների կողմից (գրել, քանդակագործություն, թատրոն և այլն)

Այս տեքստի նպատակն է բացահայտել այդ փորձերի սկզբունքները, մեթոդները և իրականացումը: Ներքոնշյալ դիտարկումները և գնահատականներն այն է, ինչ իրականում կարելի է գտնել խմբերում: Այդուհանդերձ, "խառը խմբերը" մասնավորապես կարող են գործել որպես աչք բացողներ և վերհանել նոր հեռանկարներ:

1. **Խառը խմբերում աշխատելու փորձեր**

a. Աշխատանքային խմբերի "Որակի չափանիշ"
b. "Արտացոլման գործունեություն"
c. Գրավոր սեմինարներ

2. **"Խառը խմբեր" տերմինի մեկնաբանություն**

3. **Դիտարկումներ և խորհուրդ. թեմատիկ սխեմաներ /աղյուսակներ/**

3.1 <u>Ինքնահարցում</u>
Նախքան խառը խմբում աշխատելը խորհուրդ է տրվում ինքնահարցում կատարել: Ինչու՞ և ի՞նչ չափով է խառը խումբը օգտակար: Ու՞մ համար: Ինչպե՞ս: Ի՞նչ է ակնկալում յուրաքանչյուր ոք դրանից և ի՞նչ նպաստ կարող է ունենալ ինքն այդ գործում:

3.2 <u>Սկզբունքների հաստատում</u>
Հենց սկզբից յուրաքանչյուրի համար սկզբունքների հաստատումը չափազանց կարևոր է: Սա խմբի աշխատանքի հիմքն է, և իրականացված պրակատիկայի հետ միաժամանակ պարբերաբար քննարկվելու են նաև սկզբունքները:

3.3 <u>Զարգացում, իմաստի հաղորդում</u>
Զարգացման մասին խմբի աշխատանքի սկզբում, ընթացքում և ավարտից հետո խորհրդածելը իմաստ է հաղորդում փորձին:

3.4 <u>Ժամանակն օգտագործել վերլուծելու, կարգավորելու նպատակով</u>
Զարգացումը կարող է լինել աշխատանքի համար գրավոր կամ բանավոր հիմքի ապավովումը, որում կնշվեն եզրակացությունները, դժվարությունները, կնախագծվի ապագա կիրառումը և այլն:

3.5 <u>Աշխատանքի հստակեցում</u>

Առանց հստակ ծրագրի, մեծ կամքի, առանց կոլեկտիվ ձևավորված որոշիչների հնարավոր չէ ո՛չ զարգացումը, ո՛չ էլ գործունեությունը: Այս շրջանակներում բոլոր աշխատողները աշխատում են առանձին ուղղությամբ:

3.6 Պահպանել ուղեգիծը, փոխանցել մշակութային ժառանգությունը, մտածել հետևանքների մասին

Մշակութային ժառանգության փոխանցումը նշանակում է հստակեցնել, պահպանել և կազմակերպել այն, ինչը կարող է հանդիսանալ փոխանցման արժանի արդյունք:

3.7 Գործընթացների փորձարկում, իրականացում

Խառը խմբերով աշխատանքի նպատակն է հասնել համերաշխության՝ ելնելով տարբերություններից և հակառակ դրանց, ի վիճակի լինել խրախուսել միմյանց և՛ անհատական, և՛ հավաքական ոլորտում:

3.8 Արտաքին, թե՞ ներքին աջակցություն

Վստահելի աշխատանքային միջավայրում աշխատելու համար կարևոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում յուրաքանչյուր անդամ խրախուսվում և ճանաչվում է որպես անհատ:

4 Խառը խմբերում աշխատանքը. երկու հեռանկար

1. Խառը խմբերով աշխատանքը իմաստալից է միայն այն դեպքում, եթե այն հանգեցնում է մասնակիցների տեսակետի փոփոխությանը և նոր հեռանկարների:
2. Գործունեության նպատակները և պլանը, երկու հիմնական տեսակետ /"արտադրության փուլ/ մշակութային տարածում /խառը խմբերի ներսում աշխատանքի նախապատրաստում/ ընտրության միտումներ:

Նկար 6. Քննարկում. Մարիկե Դասհորսթ (ԵՀ), Մարթա Ֆերեիրա (ԵՀ), Սյու Վեդդինգտոն (ՄԿԵԱ), Գինա Էբներ (ՄԿԵԱ)

Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 3.
Մեծահասակների կրթության նախաձեռնություններ ('Kunskapslyftet') , Շվեդիա (Պրն Բյորն Գերֆելթ)

Մեծահասակների կրթության հնգամյա նախաձեռնությունը (1997-2002) Շվեդիայում մեծահասկաների կրթության մեջ ամենամեծ ներդրումն էր: Նախաձեռնությունն ունեցել է չորս կենսական հեռանկարներ – աշխատաշուկայի և կրթական քաղաքականության նորացում, առավել անաչառ դրսևորում և մեծացող տնտեսական աճ: Նախաձեռնությունը հիմնականում վերաբերվում էր տեղական մեծահասակների կրթությանը, բայց ժողովրդական բարձրագույն դպրոցների վրա ևս ազդել է: Մեծահասակների կրթության նախաձեռնության տարիների ընթացքում Կառավարությունը ֆինանսավորել է տեղական մեծահասակների կրթության տարեկան միջինը 100.000 վայրերի և 10.000 ժողովրդական բարձրագույն դպրոցների: Ի հավելումն սրա՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց սեփական ֆոնդից ֆինանսավորել են տարեկան 37.000 վայրերի:
Մեծահասկաների կրթության նախաձեռնությունը նախապես նպատակաուղղված է եղել այն գործազուրկներին, ովքեր ընդհանրապես կամ մասամբ չունեին եռամյա միջնակարգ կրթության բարձր դասարանների որակավորում: Նպատակն էր առավել մեծ կարիք ունեցողներին ընձեռել նոր հմտություններ և գիտելիքներ ստանալու հնարավորություն: Մեծահասակների կրթության նախաձեռնությունը ավարտվեց որպես մի հատուկ նախագիծ՝ 2002/2003 թվականի ավարտին: Մոտ 800.000 մարդ բարձրացրել էին իրենց կրթական մակարդակը՝ հասնելով միջին մակարդակի, ինչը համարժեք էր բարձր դասարանի մեկամյա միջնակարգ կրթության մակարդակին:

Մեծահասկաների կրթության նախաձեռնության նպատակները
- Հիմք. Կառավարության պլանը՝ մինչև 2000թ. կեսը նվազեցնել գործազրկության մակարդակը
- Մեծահասակների կրթության համընդհանուր բարձրացում, ինչը կրթական ցածր մակարդակ ունեցողներին կապահովի կրթությունը շարունակելու և աշխատանք ձեռք բերելու հնարավորությամբ
- Մեծահասկաների կրթության և աշխատաշուկայի քաղաքականության նորացում, կրթության առավել մատչելիություն և աճի չափերի մեծացում:

Անհատին կենտրոնում դնելը, ճկուն լուծում
- Աշխատանքի և ուսման հնարավորությունների բարելավման համար անհատի պահանջները, կարիքները և նախապայմանները
- Ակտիվ համալրում, մատչելիության խթանում
- Վավերացում, ուղղորդում, անհատների ուսման պլանավորում
- Ուսման ֆինանսավորում: Տարբեր հնարավորություններ: Ներկայացվեց հատուկ ուսումնական շնորհ: Ուսումնական շնորհներ և վարկեր:
- Տարբերակված բովանդակություն /մակարդակ/ ձև, տարբեր ապահովողներ, տեսական/ մասնագիտական շեշտադրում և այլն:

Մեծահասակների կրթության նախաձեռնության վերլուծություն միջազգային հետազոտողների կողմից
- Համընդհանուր հաջողության պատմություն (մեծահասակների կրթության քաղաքականություն, նպատակային խմբեր, նոր տեղական նախաձեռնություններ…)
- Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում դրույթ
- Մեծահասկաների կրթության նախաձեռնությունը որպես միջոց՝ զարգացնելու Ողջ կյանքի ընթացքում կրթության ենթակառուցվածքը
- Առավել մեծ կենտրոնացում տեղական և տարածաշրջանային մակարդակի վրա
- Կրթությունից մինչև ուսումնառություն

Մեծահասկաների կրթության նախաձեռնության մեջ Ժողովրդական բարձր դպրոցների դերը

- Շվեդական կրթական համակարգում ոչ ֆորմալ կրթությանը զուգահեռ մեծահասակների կրթության ուղիների հաստատում (‘folkbildning’)
- Մասնակցությունը Մեծահասակների կրթության նախաձեռնությանը առկա մանկավարժական մեթոդների հիման վրա
- Մեծահասկաների կրթության նախաձեռնության ոլորտում ժողովրդական բարձր դպրոցների ուսումնասիրում. դրական արդյունքներ
- Անկախ անվճար և կամավոր գործունեության և պետական նախաձեռնությունների միջև Ժողովրդական բարձր դպրոցների հավասարակշռվածություն
- Արդյունք. ընդհանուր պետական շնորհների մեծացում

Մեծահասակների կրթության նախաձեռնության կոնցեպցիայի որոշ կողմեր

Մեծացնել մեծահասակների հնարավորությունները՝ գնալու “բարձրանալու մեկ աստիճան վերև” – Մեծահասակների կրթության նախաձեռնությունը որպես առանձնահատկություններով մի օրինակ.

- Մեծահասկաների կրթության նախաձեռնության ներառում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մեջ
- Համընդհանուր մոտեցում մեծահասակների կրթությանը
- Մեծահասկաների կրթության նախաձեռնությունը օգտվեց և զարգացրեց Ողջ կյաքնի ընթացքում ուսումնառության առկա ենթակառուցվածքը տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակում
- Մեծահասակների կրթության դիտարկումը առավել որպես ներդրում, քան որպես ծախս: Երկարաժամկետ օգուտներ անհատների և հասարակության համար
- Առաջնայնություն կարճատև ֆորմալ կրթություն ունեցող մասնակիցների, մասնավորապես՝ գործազուրկների համար: Ակտիվ համալրման միջոցառումներ, օր.՝ արհմիությունների միջոցով: Ուսանողական շնորհների տրամադրման միջոցով տնտեսական արգելքների հաղթահարում:
- Այլ երկների համար համապատասխանություն:

Folkbildningsredet, Մեծահասակների կրթության Շվեդական ազգային խորհուրդ
www.folkbildning.se
Björn Garefelt, bjorn.garefelt@folkbildning.net
+4684124809

Նկար 7. ՄԿԵԱ Կոնֆերանսների դահլիճ – ԵՀ Մեծահասկների կրթության գործողության պլան

Հիմնական Գործողություն 4.
Հմտությունների և սոցիալական կարողությունների մատչելության գործընթացի արագացում և դրանց վավերացում ու ճանաչում արդյունքների ուսումնասիրման տեսանկյունից

Աշխատանքային խմբի զեկուցում

Նախագահ. Մարթա Ֆերեիրա և Սյու Վադդինգտոն
Լավագույն փորձի օրինակ. Պորտուգալիա – Կառլոս Ռիբեիրո
Գրառում կատարող. Յոհաննի Լարյանկո

- -1 և -2 պահանջվում են Եվրոպական որակի շրջանակներով (ԵՈՇ), այսօր շատ մեծ ուշադրություն է հատկացվում համալսարանական մակարդակին, չափազանց շատ բան է պահանջվում նախքան 1-ին մակարդակ ստանալը (8 մակարդակից): Չափազանց մեծ ուշադրություն է հատկացվել (և արտացոլվել) գործող համակարգին, էլիտար և ամենաբարձր մակարդակին: Մենք կարող ենք կանխատեսել ապագան, երբ մենք կունենանք աշխատող Եվրոպական որակի շրջանակ և Ազգային որակի շրջանակ: Ներկայիս դպրոցական համակարգը կպահպանվի, սակայն հմտություններն ու գիտելիքները այսօր չէին կարող ճանաչվել և այդպես էլ պետք է լիներ: Այլ բառերով ասած՝ որոշ համակարգեր կարող են միաժամանակ գոյություն ունենալ, և չպետք է սահմանափակվեն պաշտոնական համակարգով: Սակայն բոլոր համակարգերը կարիք ունեն (կամ կունենան) որոշակի վկայագրման:
- Պաշտոնական ճանաչումը որակ չի երաշխավորում: Զգուշացեք:
- Բոլորը, այդ թվում և փախստականներն այսօր ունեն քաղաքացիության իրավունք: Մեզ անհրաժեշտ է մի համակարգ, որը կինտեգրի նրանց բոլորին և բոլորին կապահովի կրթական հնարավորություններով և մատչելիությամբ:
- Եվրոփաս. մենք բաց ենք թողել Եվրոփասսում թվարկված հմտությունների համընդհանուր ընդունված որակի ստուգումները /ապացույցները:
- Մարթա. գծագրում է այժմ հիմնական խնդիրը՝ ոչ միայն նկարագրելով տարբեր համակարգեր, այլ նաև այն, ինչ մնացել է ետևում, և այն, թե ինչպես է այն աշխատում:
- Վկայագրումը ինքնանպատակ չէ: Ամենավատը կեղծ վկայագրումն է՝ ինչ-որ բան լավ ցույց տալը: Սերտիֆիկացման հետին նպատակը պետք է լինի հնարավոր օգտագործումը, հնարավոր շահույթ ինչ-որ մեկի համար:
- Այս համակարգերի ստեղծումը դանդաղ գործընթաց է: Մարդիկ այսօր առավել շարժունակ են, և չքավորությունը գնալով պակասում է: Հնարավորությունը մի համակարգ է, որը կճանաչի քո կարողությունները՝ անկախ քո հիմքերից, կնայի, թե դու ինչ կարող ես անել, և կչափի քեզ ըստ այդմ: Վկայագրումը կարող է աշխատել որպես խթան, մղի քեզ դեպի ուսում:
- Նոր խնդիրներ պորտուգալական համակարգում (այժմ կառուցվող), օրինակ՝ հավաստագիր տալիս: ANOP –ը պայքարում է համակարգում որակի համար:
- Հիմքը ինքնագնահատումն է՝ այն, որ սովորողը ճանաչում է ինքն իրեն:

1. Մենք սկսում ենք ոչ թե գիտելիքից, այլ կարողություններից: Տարբեր սկզբնակետեր:
2. Վավերացումը պետք է նշանակի վավերացնել մի բան, որը ձեռք է բերվել անհատական աշխատանքի արդյունքում, ոչ թե տրվել է համընդհանուր քաղաքականության արդյունքում: Ուստի, պետք է լինի առավել ճկուն:
3. Կառուցվել է մի համակարգ, որը թույլ է տալիս մուտք գործել դեպի պաշտոնական դիպլոմներ
4. Այս "Նոր հնարավորությունները" Պորտուգալիայում սկսվեցին 8 տարի առաջ (օրենքով նախանշված)՝ 6 կենտրոնով: Այսօր ունի 424 կենտրոն, և նպատակ է հետապնդում ունենա

500 կենտրոն մինչև 2010թ.: Աջակցություն է ստանում պետության կողմից, սովորելու կարողությունները խթանելու մի մեծ մեքենա է: Հստակ ազատություններ վավերացման համակարգում: Տարբեր կենտրոններում ուշադրության տարբեր կենտրոններ: Ըստ Մարթա Ֆ-ի՝ սա մի ուժեղ համակարգ է, որի նպատակն է բուհը:

5. Համակարգի զարգացում: Դեպի գիտական աստիճաններ և որակավորման առավել լայն մակարդակներ, սկսել է ընդամենը մի քանիսի հետ:
6. Նպատակն է՝ 500.000 վկայագրվածներ մինչև 2010թ.:

ԱՆՕՓ մոդել

- Ընդառաջ գնալ սովորողներին
- Ստիպել սովորողներին մասնակցել
- Թարգմանել լեզուն և այն հասկանալի դարձնել
- Սովորեցնել մարդկանց ինքնագնահատման. մարդիկ միայն իրենք գիտեն, թե ինչ է իրենց անհրաժեշտ: Սա բավական ամուր չէ, վստահելու և հավատալու համար ավելին է պահանջվում: Փաստերի վրա հիմնված հավելում: Քննություններին նախապատրաստությունը կատարվում է պրոֆեսիոնալ խորհրդատուի կողմից:
- ԻԿԵԱ սինդրոմ – հաջողության զգացում (որը խաբկանք է): Կառուցելով ԻԿԵԱ որևէ բան, դու քեզ հաջողության հասած ես զգում, կարծես դու կահույք ես պատրաստել, և քեզ զգում ես որպես մի մեծ կառուցող: Բայց դու խաբված ես: Նույնն էլ կրթության մեջ է, պորտֆոլիոյի և այլնի պատրաստումը կարող է լինել թյուր ինքնավստահություն:
- Սովորողների գիտելիքների/կարողությունների մակարդակի ստուգում “bilance de competence” մեթոդով:
- Ստանդարտները, որոնց պետք է համապատասխանեն, սահմանվում է ազգային շրջանակներով:
- JURY հասարակական վավերացում: Գիտական վավերացում:
- Զարգացնել սովորելու իրենց կարողությունների հանդեպ ինքնավստահությունը սովորողների մոտ, ինպես նաև մադկանց առավել աշխատունակ դարձնելուն օգնելու նպատակով վավերացում:

Կոնկրետ գաղափարներ աշխատանքային խմբից

1. ՄԿԵԱ-ն կստեղծի մի հանձնաժողով վավերցման համար: Պետք է ուսումնասիրի պոտուգալական օրինակը և գնահատական տա համակարգի օգտակարության մասին և հավատարմագրի համակարգերը:
2. Իրական ուսուցման նախագծի իրականացում: Ո՞րն է Պորտուգալիայի համար այն առանձնահատկությունը, որ պետք է պահպանվի, և ի՞նչը կարող է փոխվել: Ավարտը տալու է արդյունք:
3. Եվրոպայում վկայագրման գործակալությունը որպես երկարաժամկետ նպատակ:
4. 2009թ. սկզբին ՄԿԵԱ-ն կազմելու է թեմատիկ խմբեր: ՄԿԵԱ անդամների կողմից որոշակի հետաքրքրություն սրա վերաբերյալ քննարկման խմբին մասնակցելու համար:
5. Ուսումնական այցեր Պորտուգալիա՝ Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում 2009-ի շարժականության գումարներով:

Նկար 8: World Cafe Session

Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 4.
Ճանաչման ազգային համակարգ: Կարողությունների վավերացում և վկայագրում. ակադեմիական գործընթացներ (Պրն Կարլոս Ռիբեիրո)

ՆՀԾԱ (ANOP) - Oficinas de Projecto, Desenvolvimento & Educação`s experience
ANOP-ը (ՆՀԾԱ- «Նոր հնարավորություններ» ծրագիր ասոցիացիա) մի կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է խթանել զարգացումը կրթության, հատկապես՝ մեծահասակների կրթության միջոցով: Ասոցիացիան զարգացնում է կրթական և ուսումնական գործողությունները երկրի տարբեր մասերում՝ Հյուսիսային, Կենտրոնական և Ալենտեյո շրջաններում, և խթանում է համագործակցությունը՝ տեղական աջակցություն ցուցաբերելու «Կրթվող հասարակության» նախագծին: Դա աշխատում է և ֆորմալ, և ոչ ֆորմալ կրթության ոլորտում, և գործում է շնորհիվ մեծահասակների կրթության ոլորտում ձեռնարկվող պետական միջոցառումների: ANOP-ը մասնակցում է Լեոնարդո, Գրունդտվիգ և Հավասար նախագծերում՝ այլ հանրային կազմակերպությունների, համալսարանների և այլ ասոցիացիաների հետ միասին: ANOP-ը ստացել է մեծահասակների կրթության հետ կապված մի շարք ազգային մրցանակներ:
www.anop.eu

ՀԱՄԱՏԵՔՍՏ / ԼԱՎ ԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ
Հիմնական գործողություններ

Արագացնել հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացը և վավերացնել ու ճանաչել դրանք ուսումնառության արդյունքների տեսանկյունից:

Ընդհանուր համատեքստ

«Նոր հնարավորություններ» ծրագիրը կիրառում է կառավարության մարտավարությունը մեծահասակների կրթության և ուսուցման ոլորտում և ներառում է սահմանափակ կրթական կամ մասնագիտական որակավորմամբ ավելի քան 500.000 պորտուգալացիների: Դպրոցները և հանրային կրթության և մասնագիտական ուսուցման կենտրոններն արդեն իրենց սովորական գործունեության համակարգի մեջ են ներդրել ճանաչման, վավերացման և հմտությունների վկայագրման գործողությունները [Reconhecimento, Validação e Certificação de Competências (RVCC.)] Գործում են առավել քան 450 «Նոր հնարավորությունների» կենտրոններ (դա արդյունք է 2008թ. ավարտված ցանցային աշխատանքների ընդլայնման):

Առավել քան 500.000 պորտուգալացիներ ընդգրկված են Նոր հնարավորությունների նախաձեռնություն – Մեծահասկների տեղաբաշխում ծրագրում (առ 31 օգոստոս, 2008թ.): Ազգային որոկավորման հանդեսի օգտակարություն՝ որպես ուսուցման և հմտությունների ճանաչման աղբյուր (ակադեմիական և մասնագիտական) – ներառում է իր մեջ հիմնական հմտությունների համար հղումներ, ինչպես նաև հղումներ EFA վերապատրաստման դասընթացների և հավաքական ուսումնական ծրագրերի համար:

EFA կուրսերի և միջնակարգ կրթության ոլորտում Կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման գործընթացների կարգավորում
«Նոր հնարավրություններում» մասնագիտական հմտությունների ճանաչման գործընթացի մեկնարկ Կենտրոնական համակարգում:

Սա Պորտուգալիայի մեծահասկաների կրթության և ուսուցման ոլորտում աննախադեպ շարժում է, որն ի հայտ է բերել հսկայական հնարավորություններ, և հետևաբար, ունի մեծ արժեք: Կես միլիոն աշխատողներ, գործազուրկներ, չաշխատողներ և սահմանափակ հնարավորություններ ունեցող կանայք, որակավորում չունեցող երիտասարներ և քաղաքացիներ դիմում են «Նոր հնարավորությունների» կենտրոններին [Centros Novas Oportunidades (CNO)]՝ ճանապարհ հարթելու իրենց մասնագիտական ապագայի համար: Կրթությունը դադարեցնելու կետը այն հնարավորությունն է, որը թույլ է տալիս այս կենտրոններին առաջարկել բոլոր պորտուգալացիներին ավարտել դպրոցի 9-րդ և 12-րդ դասարանները՝ Ճանաչման, վավերացման և վկայագրման ծրագրի միջոցով, և հետևաբար, ստանալ նախկինում իրենց համար անհասանելի բարելավված պայմաններ աշխատանքի կամ ուսման ոլորտում:

Ինչևէ, սա միակ լուծումը չէ, որ առաջարկվում է սահմանափակ որակավորում ունեցող մեծահասկաներին, ինչպես մեկնաբանում է Որակավորման ազգային գործակալությունը՝ մի միջգերատեսչական հանրային կազմակերպություն, որն ուղղորդում և կարգավորում է ազգային մակարդակում կրթության մարտավարությունը. յուրաքանչյուր և բոլոր մեծահասակների փորձը արժեքավոր է և հաշվի է առնվում վկայագրման կողմից: Ավելին, ուսման շարունակումը վճարում է ինքն իր համար, այսինքն՝ այն վերածվում է վաստակի:

Երկրի չորս կողմը տարածված «Նոր հնարավորությունների» ավելի քան 450 կենտրոններում այն մեծահասկաները, ում շնորհվել է Ունակությունների ճանաչում, վավերացում և վկայագրում, կարող են նույնիսկ ընդգրկվել նաև նոր հմտությունների գնահատման և զարգացման գործողությունների մեջ:

«Նոր հնարավորությունների» կենտրոնում ուղղություն ցույց տալիս խորհուրդ է տրվում մասնակցել նաև շրջանում գործող այլ կրթական ծրագրերին և այնպիսի նախամասնագիտական գործողությունների, ինպես օրինակ, ընկերություններում մեկամյա մասնագիտական պրակտիկան, կամ առաջարկվում է նաև կամավորական աշխատանք կատարել քաղաքացիական և հասարակական բնույթի կազմակերպություններում, որպեսզի նախադրյալներ ստեղծվեն մասնագիտական գործունեության համար, ինչը մեծապես կօգնի անհատներին մասնագիտական վերաինտեգրման գործընթացում: Մեծահասակների համար կարող են բացահայտվել ձեռնարկատիրական նոր հնարավորություններ Հմտությունների գնահատումից հետո, և մեծ պոտենցիալ է ստեղծվում սեփական փոքր ձեռնարկատիրական գործունեությունն սկսելու համար:

Այս ուղղորդման համակարգն իրականացվում է հատուկ պատրաստված մասնագետների կողմից, որոնց գործունեության հիմքը համագործակցությունն է տեղացի մարդկանց հետ, ովքեր ընդգրկված են կրթության ոլորտում, և շրջանի այլ մասնակիցների հետ, անկախ այն հանգամանքից, թե նրանք գործարար աշխարհից են, թե նույնիսկ բարեգործական կազմակերպություններից:

Կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման ազգային համակարգ. ակադեմիական գործընթացներ

Կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման ազգային համակարգ – Ակադեմիական գործընթացներ գործողության նպատակն է բարձրացնել 18-ից բարձր տարիք ունեցող այն մարդկանց գիտական որակավորման մակարդակը, ովքեր չունեն հիմնական կամ միջնակարգ կրթության որակավորում՝ ողջ կյանքի ընթացքում ուսումնառության հեռանկարներով:

Ում

Կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման ազգային համակարգ – Ակադեմիական գործընթացները կարող են լինել ճիշտ պատասխանը քեզ համար, եթե դու չունես հիմնական կամ միջնակարգ կրթության մակարդակ, և եթե դու գիտես-ինչպես և ձեռք ես բերել հմտություններ ողջ կյանքի ընթացքում քո ունեցած փորձից:
Դու կարող ես ստանալ հիմնական կրթության մակարդակ (4-րդ, 6-րդ կամ 9-րդ դասարանի), եթե

- դու 18 տարեկան ես կամ ավելի բարձր;
- չես ավարտել 4-րդ, 6-րդ կամ 9-րդ դասարանը.

Դու կարող ես ստանալ միջնակարգ կրթության մակարդակ (12-րդ դասարան), եթե դու 18 տարեկան ես կամ ավելի բարձր, և եթե համապատասխանում ես հետևյալ պահանջներին.եթե 23 տարեկանից փոքր ես և ունես առնվազն 3 տարվա հիմնավորված մասնագիտական փորձ:

Նպատակը

Կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման ազգային համակարգը թույլ է տալիս ձեզ ճանաչել, վավերացնել և վկայագրել ձեր կյանքի ընթացքում տարբեր ոլորտներում ձեռք բերած փորձի արդյունքում ստացած «իմանալ-ինչպես» և այլ կարողությունները: Այս համակարգով ստացած վկայագրումը ոչ միայն ձեր անձնական սոցիալական և մասնագիտական գնահատականն է, այլ նաև դասընթացների իրականացման:

Ի՞նչ է սա:

Կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման ազգային համակարգ – Ակադեմիական գործընթացները զարգացվում են մի գործընթացի կողմից, որն իրականացվում է «Նոր հնարավորությունների» կենտրոնում՝ հատուկ մասնագիտացված և փորձառություն անցած մասնագետների կողմից: Այս գործընթացները հիմնական և միջնակարգ կրթության համար ունեն համապատասխանաբար հետևյալ հիմքերը՝

- Մեծահասակների կրթության և ուսուցման արտացոլման շրջանակների Հիմնական կարողություններ (հիմնական կրթություն)
- Մեծահասակների կրթության և ուսուցման արտացոլման շրջանակների Հիմնական կարողություններ (միջնակարգ կրթություն)

Եվ այն կազմված է երեք հիմնական տարրերից.

- Կարողությունների ճանաչում;
- Կարողությունների վավերացում;
- Կարողությունների վկայագրում:

Ի՞նչ է սերտիֆիկացումը:

Կարողությունների ճանաչման, վավերացման և սերտիֆիկացման ազգային համակարգ – Ակադեմիական գործընթացը շնորհում է ձեզ հիմնական մակարդակի վկայագրում (հիմնական կրթության 1-ին, 2-րդ կամ 3-րդ ցիկլի որակավորման սերտիֆիկատ և հիմնական կրթության դիպլոմ), կամ միջնակարգ մակարդակի սերտիֆիկացում (միջնկարգ կրթության սերտիֆիկատ և միջնակարգ կրթության դիպլոմ): Եթե գործընթացի ավարտի հետևանքով վկայագրման գործընթացը չհանգեցնի վկայականի կամ դիպլոմի շնորհման, դրա համար միշտ էլ կարող եք դիմել:

Որտեղ

Երկրի Հյուսիսից մինչև հարավ տարբեր վայրերում տեղակայված են "Նոր հնարավորությունների" 456 կենտրոններ, և նախատեսվում է շարունակել դրանց աճը մինչև 2010թ.:
"Նոր հնարավորությունների" կենտրոնները կարող են գործել.

- ցանկացած հիմնական կամ միջնակարգ դպրոցում;
- Instituto do Emprego e Formação Profissional (IEFP)-ի մասնագիտական ուսուցման կենտրոններում;
- Ինքնակառավարման մարմիններում, ընկերություններում, ասոցիացիաներում;
- ուսուցման հավատարմագրված այլ կենտրոններում:

"Նոր հնարավորությունների" կենտրոնները սահմանում են մի շարք գործիքներ, որոնք պատրաստված են մեծահասկաների որակավորման պահանջներին համապատասխան՝ ներառելով որակավորում ունեցող և մասնագիտացված թիմերի՝ զարգացնելու աշխատանքը հետևյալ միջամտության մակարդակներում.

- Ընդունում – Մեծահասակների ընդունում և դերակատարում, հստակեցում՝ կապված "Նոր հնարավորությունների կենտրոնների առաքելության հետ,տարբեր աշխատանքայի գործընթացների իրականացում, հնարավորության ուղղորդում դեպի կրթություն և ուսուցում կամ դեպի որակավորումների ճանաչում, վավերացում և վկայագրում:
- Ախտորոշում- Մեծահասկաների ոլորտի վերլուծություն՝ դիմելով հիմնականում կիսամյակների հստակեցմանը, ուսումնական պլանի վերլուծությանը, համապատասխան անհատական և հավաքական կամ մարտավարական հարցումներին, առկա լավագույն պատասխանների հստակեցում, իրականացված վերլուծության դիտարկում:
- Ուղղորդում – Ինֆորմացիայի հաղորդում մեծահասկներին, ինչն ուղղորդմանը թույլ կտա հանգել լավագույն պատասխանին՝ ներառյալ նաև կրթության և ուսուցման այն արմատների ուղղորդմանը, որոնք գնտվում են «Նոր հնարավորությունների» կենտրոնի սահմաններից դուրս, կամ ճանաչման, վավերացման և վկայագրման գործընթացների ուղղորդումը: Ուղղորդումը հանդիսանում է կենտրոնական թիմի և մեծահասակների միջև մի համաձայնություն, իրականցվում է՝ հիմնվելով մեծահասկների առանձնահատկությունների վերլուծության, նրանց կրթական և ուսումնական արմատների և կենսափորձի, միտումների, պահանջների և ակնկալիքների վրա, որոնք հստակեցվել են ախտորոշման գործընթացի ընթացքում:
- Որակավորումների ճանաչում – Մեծահասակի կողմից կյանքի ընթացքում ծավալած գործունեության արդյունքում իր իսկ ձեռք բերած գիտելիքների և կարողությունների հստակեցում՝ հիմնելով մեթոդաբանության և որակավորման հավասարկշռության վրա, ինչպես նաև օգտագործելով զարգացման որոշ գործիքներ, որոնց միջոցով մեծահասակը կարող է ապացուցել իր կարողությունները և գիտելիքները՝ սկսելով ուսումնառության ռեֆլեկտիվ պորտֆոլիոյի կառուցումը:
- Որակավորման վավերացում – Որակավորման զարգացում ողջ կյանքի ընթացքում, ինչը պահանջվում է հիմնական որակավորումների հետ բախվելիս: Վավերացումը ներառում է ուսումնառության ռեֆլեկտիվ պորտֆոլիոյի ինքնազարգացումը՝ ներառելով նաև հիմնական կրթության ճանաչման, վավերացման և որակավորման համապատասխան ոլորտների մասնագետների մասնակցությամբ հետագա զարգացումը:
- Որակավորման վկայագրում – Մեծահասակը ներկայացվում է վկայագրման հանձնաժողովին՝ վավերացված որակավորման վկայագրման նպատակով:

Եվրոպական Հանձնաժողովի կողմից լավագույն փորձի օրինակների համար սահմանված չափանիշները հետևյալն են.

- **Կենսունակ**

Գործունեությունը աջակցություն է ստանում երկու նախարարությունների կողմից՝ Կրթության և Աշխատանքի ու սոցիալական հարցերի: Գործունեության համար հիմք է հանդիսանում Որակավորման ազգային հանդեսը՝ ցածր մակարդակի որակավորման կառավարման մարտավարության համար նախատեսված մի գործիք: Այն կազմում է Ազգային որակավորման համակարգի բաղկացուցիչ մասը (որոշում-օրենք 396/2007 դեկտեմբերի 31-ի).

Այս գործիքը կարող եք գտնել հետևյալ կայքում.
www.catalogo.anq.gov.pt.
Այս փուլում այն ընդգրկում է կրթական և ուսուցման 37 ոլորտների 229 մասնագիտական որակավորում:

Որակավորման ազգային հանդեսը կազմվել է համաձայն կրթության և ուսուցման ոլորտների՝ Կրթության և ուսուցման դասակարգման ազգային ոլորտների (Նախարարության հրաման 256/2005 16 մարտի) համապատասխան: Յուրաքանչյուր որակավորման համար սահմանված են հետևյալ հղումները.

- Մասնագիտական պրոֆիլ;
- Ուսուցման արտացոլում;

Ճանաչման, վավերացման և վկայագրման հղումների շրջանակ (հիմնական և տեխնոլոգիական տարրեր):

Որակավորման ազգային հանդեսը ստեղծվել է համաձայն Եվրոպական որակավորման շրջանակի իրականացման – EQF [Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի Հանձնարարական 23 ապրիլի 2008 Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համար Եվրոպական որակավորման շրջանակի ստեղծման մասին (2008/C 111/01)] և համապատասխան Ազգային որակավորման շրջանակի:

- **Փաստարկված խթանում**

Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունը (OECD/ՏՀԶԿ) մեծապես գովաբանում է Պորտուգալիայում կրթության ոլորտում մասնագիտական ուսուցման շեշտադրումը և ուսուցման ոլորտում առաջադրված նպատակներին հասնելու համար պետական միջոցառումների ձեռնարկումը: Ճանաչումը երևում է Պորտուգալիայի մասին OECD-ի տնտեսական ուսումնասիրության մեջ, որը կազմակերպության գլխավոր քարտուղար Անգել Գուրրիան ներկայացրերց Լիսաբոնում:

Վերոնշյալ փաստաթղթի ներկայացման ընթացքում Անգել Գուրրիան նշեց, որ հետքրքիր բարեփոխումներ են իրականացվել կրթության ոլորտում և ընգծեց «Նոր հնարավորությունների» նախաձեռնությունը՝ որպես մի լավ միջոցառում, քանի որ այն «ուսումնական նոր հնարավորություններ է ընձեռում երիտասարդների համար, ում սպառնում է դպրոցի կողմից մերժումը այն ժամանակ, երբ հնարավորություն է ընձեռվում ցածր ակադեմիական մակարդակ ունեցող մեծահասկաներին: Մինչ այժմ ունեցած արդյունքները խոստումնալից են: Այս կապակցությամբ Գուրրիան նշեց, որ OECD-ի մի շարք երկրներ կարող են օգուտ քաղել այս ոլորտում Պորտուգալիայի ունեցած փորձից»:
OECD-ի կողմից հունիսի 25-ին իրականացված ուսումնասիրությունը թվարկում է մի շարք ծրագրեր, որոնք ձեռնարկվել են Կառավարության կողմից կրթության ոլորտում՝ երիտասարդների և մեծահասակների որակավորումը բարձրացնելու նպատակով: Այս փաստաթուղթը առաջին պլան է մղում դրական նախաձեռնությունները, որոնք ձեռնարկվել են կթությունը մասնագիտորեն որակավորելու համար, ինչպես նաև դասավանդման կարիերայի զարգացման համար իրականացվող պետական միջոցառումները: Փաստաթուղթը նշում է «Նոր հնարավորություններ»

նախաձեռնության կարևորությունը, հատկապես «Նոր հնարավորություններ» կենտրոնների ցանցի զարգացումը, երիտասարդների համար ապահովվող դասընթացների բազմազանությունը (հատկապես կրկնակի վկայագրմամբ կուրսերը) և մեծահասակների կարողությունների ճանաչումը, վավերացումը և վկայագրումը:
Այս նախաձեռնության արդյունքները ևս արժեքավոր են, հատկապես տեխնիկական բարձր դպրոցների մակարդակով կուրսերի պահանջի աճը, ինչպես նաև "Նոր հնարավորությունների" կենտրոնների տարածումը և այս նախաձեռնությունից օգտվող մեծահասակների թվի աճը: Պորտուգալիայի համար OECD-ի հանձնարարականն է՝ շարունակել պորտուգալացիների որակավորման մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունները՝ հիմնական շեշտը դնելով ձեռք բերված արդյունքների զարգացման վրա: Առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել OECD-ի կայքը.
http://www.oecd.org/document/19/0,3343,en_2649_201185_40857491_1_1_1_1,00.html

- **Համընդհանուր միասնական մոտեցում (ուղղորդում, որակ, անձնակազմ)**

"Նոր հնարավորությունների" կենտրոնների Որակի կանոնակարգը երաշխավորում է որակի համակարգ և համընդհանուր միասնական մոտեցում:
"Նոր հնարավորությունների" կենտրոնները կենտրոնական գործակալներ են, ովքեր հանձն են առել զարգացնել մեծահասակների որակավորումը Նոր հնարավորությունների նախաձեռնության շրջանակներում:
Նպատակն է ուսման, որակավորման և վկայագրման համար նոր հնարավորությունների ստեղծմամբ միջնակարգ դպրոցական մակարդակը վերածել նվազագույն մակարդակի պորտուգալացի հասարակության համար: Սա մի քաղաքականություն է, որը պահանջում է արդյունքներ, խստություն և թափանցիկություն: Այս նպատակին հասնելը սոցիալական անհրաժեշտություն է և հավաքական պատասխանատվություն, որը պահանջում է կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման համակարգի պետական մոտեցում, որակավորման և վկայագրման մատչելիություն, ուսուցման կարողությունների շարժականություն, ինստիտուցիոնալ համագործակցություն, գիտելիքների տարածում և հանրային ու մասնավոր գործիչների մասնակցություն կրթության և ուսուցման ոլորտում:
Այս առումով Նոր հնարավորությունների կենտրոնների ներմուծումը ինստիտուցիոնալորեն տարբերակված ցանցային աշխատանք է: Նրանց դերակատարումը մեծահասակների կրթության և ուսումնական պլանի բարելավման ոլորտում տարբեր լուծումների զարգացման և տեղափոխման հարցում, ինչպես նաև մասնագիտական ուսուցման կենտրոնները, ուսուցման համակարգում ընդհանրապես և տնեսական, սոցիալական և մշակութային գործիչները – բոլորը վճռորոշ գործոններ են նշված պահանջների կատարման համար նախանշված նպատակին հասնելու գործում:
Այս համատեքստում Որակավորման ազգային գործակալությունը հրապարակել է Նոր հնարավորությունների կենտրոնների Որակի Կանոնակարգ: Որակավորման ազգային գործակալությունը այս առումով լիովին գիտակցում է իր պատասխանատվությունը ուղեցույցների և գործիքների ստեղծման հարցում, ինչը մեծ արժեք է տալիս և մեծապես խթանում է պորտուգալական հասարակության որակավորման ոլորտում արձագանքին: Կանոնակարգը այս ձգտումների արդյունքն է: Կանոնակարգը մի գործիք է, որը սահմանում է բարձր չափանիշներ, և որը բացատրում է գործողության և սպասարկման ոլորտում մարտավարությունները՝ այդպիսով նպաստելով աշխատանքային գործընթացին պետական աջակցությանը, թիմերի շարժականությանը և ֆինանսավորման արդյունավետությանը:

- **Փոխադրելի. ինչպես դա անել**

- "Ռեսուրսներ և դինամիկ" ժողովածու

- *Աջակցություն գործիքներին՝ "Նոր հնարավորությունների" կենտրոններում մասնագիտական նախագծերի ստեղծման համար*
- "Արձագանք և հեռանկարներ" ժողովածու
- "Պրակտիկա և նախագծեր" ժողովածու

Կոնտակտ.
Carlos Ribeiro
ANOP
Rua Dr. Elнsio de Castro 83, r/c dtє
4520-213 Santa Maria da Feira
Portugal
Tel: +351 256 289 350
Fax: +351 256 289 351
anop.geral@netvisao.pt

www.anop.eu

Նկար 9. Հիմանական գործունեություն 3-ի Աշխատանքային խումբ. Նախագահ՝ Մարիկե Դասհորսթ և Բյորն Գարֆելթ

Հիմնական Գործողություն 5.
Մեծահասակների կրթության ոլորտի մոնիտորինգի բարելավում
Աշխատանքային խմբի զեկուցում

Նախագահ. Ինգրիդա Մինիսկո (LAEA)
Լավագույն փորձի օրինակ. Սլովենիա – Վիհա Մոհորչիչ Շպոլար; ՄԲ – Ալան Տուքեթ
Գրառում կատարող. Մարթա Լոթթես

Մոնիտորինգի հիմնական ոլորտները, որոնք սահմանվել են քննարկումների ընթացքում
- Մասնկացություն
- Ապահովողներ
- Մատչելիություն
- Ֆինանսավորում
- Առաջընթաց / ձեռքբերումներ
- Գրագիտության մասին տվյալներ
- Կառավարության կողմից խոստումներ
- Աշխատաշուկայի ազդեցություն

Ապագայի համար հանձնարարականներ
1. Եվրոպական մակարդակով ընթացիկ հետազոտություններ կատարելու մատչելիություն՝ ներայալ նաև ԵՄ դիտարկումները (կողմնորոշված դեպի համեմատելիություն և սովորողներ)
2. Զարգացնել հմտությունները, թե ինչպես կարելի է օգտագործել և մեկանբանել տվյալը և ինչպես համապատասխանեցնել այն առկա քաղաքական պահանջներին:
3. Ֆինանսական աջակցություն

Նկար 10. Հիմնական գործողություն 2-ի Աշխատանքային խումբ. Նախագահ. Հելեն Քյոհ և Էվա-Ինկերի Սիրելիուս

Լավագույն փորձի օրինակ Հիմնական գործողություն 5.
Մեծահասակների կրթության ոլորտի մոնիտորինգի բարելավում. ՄԲ փորձը (Պրն Ալան Թուքեթթ)

Կառավարության մոնիտորինգ

Կառառվարությունն իրականցնում է մոնիտորինգը հետևյալի միջոցով.

- ուսանողների մասնակցության և ձեռքբերումների մասին տվյալների հավաքագրում
- իրականացման կանոնավոր հսկողություն

ՀԿ-ներ

ՀԿ-ների խնդիրն է վերլուծության ենթարկել հանրային տվյալները և մեծահասակների կրթության հնարավորությունների ազդեցությունը հրապարակել:

Մասնակցությունը մեծահասակների կրթությանը. տևական մոնիտորինգ

Մեծահասկաների կրթություն LSC-ի կողմից ֆինանսավորվող հետագա կրթության ապահովում 1996-2007 (Անգլիա)

Աղբյուր. Աաջին վիճակագրական տվյալներ, Կրթություն և հմտություններ, Խորհուրդ

Շնորհիվ Առաջին վիճակագրության արդյունքների համակարգի փոոփոխությունների՝ 2003/2004թթ. և նախորդ տարիները հաջորդ տարիների հետ համեմատելի չեն:

Ուսումնառության և հմտությունների խորհրդի հիմնական նախագծերում մեծահասակները և ընդհանրապես Ուսումնառության և հմտությունների խորհուրդի կողմից ֆինանսավորված իրականացումը (Անգլիա)



	2004/05	2005/06	2006/07	
East	256.9	302.7	350.9	
Line 2	173.6	332.3	470.4	
Line 3	125.4	235.8	242.1	
Line 4	4547.1	3886.1	3166.5	

Աղբյուր. Վիճակագրական առաջին արդյունքներ, Ուսումնառության և հմտությունների խսրհուրդ

Մասնակցությունը մեծահասակների կրթությանը. Տարիքային խմբեր



Աղբյուր. Վիճակագրական առաջին արդյունքներ, Ուսումնառության և հմտությունների խսրհուրդ

Մասնակցությունը մեծահասակների կրթությանը: Երկարատև մոնիտորինգ

Վերջին 4 շաբաթների ընթացքում աշխատանքի հետ կապված վերապատրաստումներ անցնող աշխատողների տոկոսային հարաբերությունը, Անգլիա, կիսամյակ 2



NIACE-ն երկար ժամանակ համոզված է եղել, որ համակարգի արդյունավետության հիմնական չափանիշը մասնակցությունը գծագրելն է, որպեսզի հարցում կատարվի, թե ովքեր չեն օգտվում: Հարցում է կատարվում ուսման բոլոր ոլորտներում մասնակցության մասին՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ոչ պաշտոնական, հանրային ֆինանսավորմամբ և ինքնակազմակերպված:

Հարցը, որ տալիս ենք մենք

Սովորելը կարող է նշանակել պրակտիկայի ձեռքբերում, ուսումնասիրում կամ ընթերցանություն: Այն կարող է նաև նշանակել ուսուցանվել, ուղղորդվել: Սա այն է, ինչի միջոցով կարող եք զարգացնել հմտությունները, գիտելիքները, կարողությունները կամ ինչ-որ բան հասկանալը: Սովորելը կարող է նաև կոչվել կրթություն կամ ուսուցում: Դա կարող եք անել պարբերաբար (ամեն օր կամ ամիս) կամ կարող եք անել կարճ ժամանակով: Այն կարող է լինել լիաժամ կամ կես դրույքով, աշխատանքի վայրում, տանը կամ մեկ այլ վայրում՝ ինչպես օրինակ՝ քոլեջում: Սովորելը պարտադիր չէ, որ հանգեցնի որակավորման: Մեզ հետաքրքրում է, թե ինչ ուսում եք դուք ստացել, անկախ նրանից, թե այն ավարտել եք, թե ոչ:

Ներկա կամ վերջին ժամանակներում սիցիալ-տնտեսական դասի կողմից մասնակցությունը - – 1999, 2002, 2005, 2006 2007 և 2008 համեմատություն



Ներկա պահին կամ վերջին ժամանակներում ուսմանը մասնակցությունն ըստ տարիքի, 2008



Ներկա պահին կամ վերջին ժամանակներում ուսմանը մասնակցությունն ըստ սեռերի, 2008



Ուսմանը մասնակցելու ապագա միտումները, 2002-2008 համեմատություն

	2006 %	2007 %	2008 %
Միանգամայն պատրաստակամ	22	25	19
Պատրաստակամ	22	18	17
Ընդամենը պատրաստակամ	**45**	**43**	**36**
Հաստատապես չեն պատրաստվում	14	12	14
Չեն պատրաստվում	38	43	46
Ընդամենը չեն պատրաստվում	**52**	**55**	**61**

Չգիտեն	3	2	3
Հարցվողների ընդհ. թիվը	4.690	4.669	4.691

Հատուկ խմբերով մասնակցությունը, 2006, 2007 և 2008 համեմատություն

	2006 %	2007 %	2008 %
Բոլորը մեծահասկաներ	42	41	38
Տղամարդիկ	41	41	38
Կանայք	44	42	39
Սոցիալ - տնտեսական C2	41	40	33
Սոցիալ – տնտեսական խումբ DE	27	27	26
25-34 տարեկանների խումբ	49	50	43
65-74 տարեկանների խումբ	19	21	19
Լրիվ դրույքով աշխատողներ	51	49	45
Կես դրույքով աշխատողներ	55	47	48

Ինչ են մարդիկ ուզում սովորել

Ներկա/Վերջերս ուսման բոլոր առարկաները – Առաջին տասնյակը, հարցումը ըստ տարիքային խմբերի					
17-44	%	Բոլորը 45+	%	Բոլորը 55+	%
Համակարգչային մտություններ	19.3	Համակարգչային մտություններ	31.8	Համակարգչային մտություններ	40.6
Բիզնեսի մասին դասընթացներ	9.1	Օտար լեզուներ	8.1	Օտար լեզուներ	10.2
Առողջապահություն և բժշկություն	8.4	Բիզնեսի մասին դասընթացներ	6.5	Արվեստ	7.2
Օտար լեզուներ	4.3	Առողջապահություն և բժշկություն	6.3	Պատմություն	4.7
Հասարակական գիտություններ	4.2	Արվեստ	5.0	Կրոն	4.5
Անգլերեն լեզու/ գրականություն	3.8	Պատմություն	3.9	Առողջապահություն և բժշկություն	4.0
Ինժեներություն	3.7	Հասարակական աշխատանք	3.9	Երաժշտություն	3.2
Բնական գիտություններ և մաթեմատիկա	3.7	Կրոն	3.8	Բիզնեսի մասին դասընթացներ	3.1
Հասարակական աշխատանք	3.2	Մասնագիտական առողջություն և անվտանգություն	2.8	Հասարակական աշխատանք	2.5
Հեռահաղորդակցություն	2.8	Հեռահաղորդակցություն	2.6	Անգլերեն լեզու/ գրականություն	2.3

Հիմք. ներկա պահին / վերջերս սովորողներ

Ինչքան են մարդիկ սիրում սովորել աշխատանքի վայրում

Աշխատանքը բարելավելու համար ուսման աղբյուրները, 2007			
	Շատ կամ բավական օգնությամբ	Որոշ օգնությամբ %	Քիչ կամ առանց օգնության %

	%		
Ուսումը որպես ձեռքբերում			
Վերապատրաստման դասընթացներ, որոնց համար վճարել եք Դուք կամ Ձեր գործատուն	54	20	24
Հմտությունների և կարողությունների կիրառում աշխատանքից դուրս	42	29	28
Որակավորման համար սովորելիս ձեռք բերված հմտություններ	45	21	31
Գրքերի, ձեռագրերի և ամսագրերի ընթերցանություն	39	24	50
Ինտերնետի օգտագործում	29	18	50
Ուսումը որպես մասնակցություն			
Աշխատանքի ապրբերական կատարում	82	13	5
Ուրիշների կողմից ցուցադրում, թե ինչպես կատարել գործունեությունը կամ առաջադրանքները	62	23	13
Դիտել կամ լսել ուրիշներին, մինչ նրանք գործունեություն են իրականացնում	56	26	16
Ազդեցությունը Ձեր գործունեության վրա	53	30	15
Օգտագործելով սխալները կամ դատապարտումը	38	27	33

Ինչքան են մարդիկ սիրում սովորել աշխատանքից դուրս

Աշխատանքից դուրս ուսումնառության և հմտությունների զարգացման ձևեր, 2008թ.				
		Որոշ օգնությամբ %	Քիչ օգնությամբ կամ առանց օգնության %	Չգիտեմ %
Ուսումը որպես ձեռքբերում				
Գրքերի, ձեռագրերի և ամսագրերի ընթերցանություն	57	25	13	9
Որակավորման համար սովորելիս ձեռք բերված հմտություններ	53	26	13	9
Վերապատրաստման դասընթացներ, որոնց համար վճարել եք Դուք կամ Ձեր գործատուն	53	21	14	12
Հմտությունների և կարողությունների կիրառում այլ վայրում	52	29	12	7
Ինտերնետի օգտագործում	44	20	25	12
Ուսումը որպես մասնակցություն				
Ուրիշների կողմից ցուցադրում, թե ինչպես կատարել գործունեությունը կամ	64	22	9	6

առաջադրանքները				
Կանոնավոր հիմքով գործունեության իրականացում	60	23	10	7
Դիտել կամ լսել ուրիշներին, մինչ նրանք գործունեություն են իրականացնում	57	26	11	6
Ազդեցությունը Ձեր գործունեության վրա	49	31	12	7
Օգտագործելով սխալները կամ դատապարտումը	46	30	17	7

Առավել լայն օգուտներ

- երկարացնում է ակտիվ քաղաքացիությունը
- կանխում է Ալզեյմերի ազդեցությունը
- սովորողների 13% հավանական է, որ կթողեն ծխելը
- սովորողների 34%-ի մոտ բարձրացել է ռասայական հանդուրժողականությունը
- սովորողներն առավել քիչ հավանական է, որ լինեն քաղաքականապես ցինիկ
- սովորողներն առավել քիչ են դժգոհ իրենց կյանքից:

Սովորելն ունի հետևյալ խթանները

- ցանկացած նախնական կրթություն
- ցանկացած սոցիալական դաս

http://www.learningbenefits.net/

Նկար 11. World Café նիստ

Լավագույն փորձի օրինակ Հիմնական Գործողություն 5.
Սլովենիայում Մեծահասակների կրթության Գործողության պլան (Դր. Վիդա Ա. Մոհորչիչ Շպոլար)

1996թ. ընդունված կրթության մասին նոր օրենսդրությունը ներառում էր նաև Մեծահասկաների կրթության մասին օրենք: Հոդված 22-ում խոսվում է մեծահասկաների կրթության մեջ հասարակական շահի մասին, որը սահմանված է Մեծահասակների կրթության պլանով, որն առաջ է քաշվում Կառավարության կողմից և հաստատվում է Խորհրդարանի կողմից: Հոդված 23-ը սահմանում է, թե ինչից պետք է բաղկացած լինի Մեծահասակների կրթության ազգային պլանը. նպատակները, առաջնայնությունները, այն իականացնելու համար անհրաժեշտ գործողությունները և հանրային գումարներից պահանջվող գումարի չափը:

Մեծահասակների կրթության պլանի գլոբալ նպատակները և առաջնայնության ոլորտները

Գլոբալ նպատակներ
Մեծահասակների կրթության պլանը սահմանում է 4 գլոբալ նպատակներ և առաջնայնության 3 ոլորտներ: Բոլոր 4 գլոբալ նպատակներն էլ համահավասար են համարվում:
Դրանք են.

- Բարելավել մեծահասկաների կրթության ընդհանուր մակարդակը
- Բարձրացնել կրթական ձեռքբերումների մակարդակը, որտեղ հիմնական կրթական չափանիշը համարվում է առնվազն 12-ամյա դպրոցական կրթությունը:
- Բարձրացնել աշխատելու հնարավորությունները
- Մեծացնել սովորելու հնարավորությունները և մասնակցությունը

Առաջնայնության ոլորտներ

1. Ընդհանուր մեծահասակների կրթություն և ուսումնառություն
2. Կրթական ձեռքբերումների մակարդակի բարձրացում
3. Կրթություն և ուսուցում աշխատաշուկայի համար

Ad 1) Առաջնայնության առաջին ոլորտ - Ընդհանուր մեծահասակների կրթություն և ուսումնառություն
Մեծահասակներին կտրվի հնարավորություն մասնակցելու ամենատարբեր ծարագրերում՝

- բարձրացնել ընդհանուր և մշակութային մակարդակը,
- կրթություն, անձնական զարգացում և սոցիալական ընդգրկվածություն
- ակտիվ քաղաքացիություն,
- առողջ ապրելակերպ,
- շրջակա միջավայրի պաշտպանություն,
- մշակութային ավանդույթների և ազգային ինքնության պահպանում, գրագիտության զարգացում,
- նոր հիմնական հմտությունների ձեռքբերում,
- հասարակական անտարբերության նվազեցում,
- ուսման և լքված դպրոցական կյանքի մոտիվացում և ոգեշնչում:

Այս նպատակներին հասնելիս ընդհանուր կրթության տարբեր ձևերին մասնակոցող հանրության թիվը մինչև 2010թ. կհասնի 6%: Նպատակային խմբերն են առավել երիտասարդ մեծահասակները, թերի կրթություն ունեցողները, գործազուրկները, սահմանափակված խմբերը, փախստականները:

Ad 2) Առաջնայնության երկրորդ ոլորտ – Կրթական ձեռոքբերումների մակարդակի բարձրացում
Մեծահասկաներին հնարավորություն կտրվի ստանալ կամ ավարտել

- տարրական կրթություն,
- ցածր կամ բարձր միջնակարգ մասանագիտական կամ ընդհանուր կրթություն,
- բարձրագույն մասնագիտական կրթություն:

Պարտադիր տարրական կրթություն չունեցող մարդկանց առնվազն 50%-ը կստանա այդ մակարդակը, բարձր դասարանի միջնակարգ կրթությունը չավարտածների առնվազն 25%-ը կստանա ցածր կամ բարձր միջնակարգ մասնագիտական կամ ընդհանուր կրթություն, և բարձր միջնակարգ կրթությունն ավարտածների առնվազն 1/10-րդ մասը կստանա բարձրագույն մասնագիտական կրթություն:.Այս հարցում աշխատաշուկայի պահանջները հաշվի են առնվելու, քանի դեռ նպատակային խմբերը մեծահասակներն են առանց կրթական մակարդակի և գործազուրկ: Առաջնայնությունը կտրվի բնական-տեխնիկական ոլորտին: The needs of the labour market will be taken into consideration in this respect, while the
target group are adults without a level of education and unemployed.
Priority will be given to the natural-technical field.

Ad 3) Առաջնայնության երրորդ ոլորտ – կրթություն և ուսուցում աշխատաշուկայի համար

Մեծահասկաներին կտրվի հնարավորություն՝

- մասնակցել գրագիության մակարդակը բարձրացնող ծրագրերին՝ գիտելիքները և հմտությունները պահպանելու, արդիականացնելու և թարմացնելու համար, որպեսզի ավելանան աշխատելու հնարավորությունները,
- սերտիֆիկացման համակարգի միջոցով ստանալ Ազգային մասնագիտական որակավորում:

Այս նպատակին հասնելու համար գործազուրկ մարդկանց 50%-ը մասնակցելու է տարբեր ծրագրերի՝ մեծացնելու համար աշխատանքի հնարավորությունները: Կներառվեն նաև նրանք, ում աշխատանքը վտանգի տակ է կրթական ցածր մակարդակի պատճառով: Մասնագիտական կամ այլ կրթություն չունեցող աշխատողների և գործազուրկների 10%-ը Ազգային մասնագիտական որակավորում կստանան սերտիֆիկացման համակարգի միջոցով: Նրանք ևս հանդիսանում են առաջնային խումբ:

Մեծահասկաների կրթության պլանի բոլոր նպատակներին հասնելու համար նախանշված են տարբեր գործողություններ, որոնք կապված են հետևյալի հետ.

- մեծահասկաների կրթության մեջ ուսուցիչներ և այլ մասնագիտական անձնակազմ,
- ծրագրի ապահովում,
- մեծահասկաների կրթության մասին ինֆորմացիա և ուղեցույց,
- հետազոտության և զարգացման գործունեություն,
- կազմակերպչական կառուցվածք,
- խթանում:

Օրենքի համաձայն՝ Մեծահասկաների կրթության պլանի համար անհրաժեշտ հանրային ֆինանսավորման գումարի չափերը ևս պետք է նախանշվեն: Դա արվեց: Նայելով հանրային ֆոնդի կողմից ֆինանսավորմանը՝ իրավիճակն այսպիսին է.

Առաջնայնության ոլորտ %	Առաջնայնության ոլորտ %
I Ընդհանուր մեծահասկաների կրթություն և ուսումնառություն	27,19
II Կրթական ձեռքբերումների մակարդակի բարձրացում	39,19

III Կրթություն և ուսուցանում աշխատաշուկայի համար	17,43
Ենթակառուցվածք	16.19
Ընդամենը	**100.00**

Մեծահասակների կրթության պլանի նպատակներն իրականացնելով՝ 2010թ.

- 25-64 տարեկան բարձր միջնակարգ կրթություն ունեցող մեծահասկաների թիվը կկազմի առնվազ 85% (Eurostat 2005 – 80,5%)
- նույն տարիքային խմբի մասնակցությունը ողջ կյանքի ընթացքում ուսումնառությանը կկազմի առնվազն 15% (Eurostat 2005 – 15%)

Մեծահասակների կրթության պլանն ընդունվել է Խորհրդարանի կողմից 2004թ. հունիսին: Ֆինանսավորումը կատարվել է ազգային բյուջեի և Եվրոպական սոցիալական ֆոնդի կողմից: Ըստ օրենքի՝ պետք է Պլանի իրականացման մասին զեկույց ներկայացնել Կառավարությանը տարին մեկ անգամ և խորհրդարանին՝ երկու տարին մեկ անգամ: Մոնիտորինգն իրականացվում է Պլանի իրագործմանը նպաստող նախարարությունների կողմից (կրթության և աշխատանքի): Նրանք երկուսն էլ պատասխանատու են նաև ESS ֆոնդի համար՝ համապատասխան ոլորտներում: Մեծահասկանեիր կրթության պլանում մեծահասակներն ընկալվում են այնպես, ինչպես նշված է օրենքում – սովորողներ, ովքեր "ավարտել են նախնական միջնակարգ դպրոցը և ովքեր ուզում են ձեռքբերել, ընդլայնել և խորացնել իրնեց գիտելիքները՝ առանց պաշտոնապես ստանալու աշակերտի կարգավիճակ" (1996թ., Հոդված 1)

Ազգային մակարդակում մեծահասկների կրթության մասին տվյալներ հավաքում է Վիճակագրության գրասենյակը և լուսաբանում է հետևյալը.

- կրթության մեջ ներառված մեծահասկաների թիվը (ֆորմալ- ոչ ֆորմալ)՝ ըստ ոլորտների՝ կրթական մակարդակ, սեռ, տարիք, հաստատության տեսակը, տեղական ինքնակառավման մարմիններ
- մեծահասակների կրթության մեջ ընդգրկված ուսուցիչների քանակը և կրթական մակարդակը (ժամանակավոր աշխատող, կես դրույքով աշխատողներ, դրսից համագործակիցներ) – աշխատակազմի որակը
- գույքի որակը (շենքեր, սարքավորումներ – յուրաքանչյուր 10 տաին մեկ անգամ)
- շրջանավարտները (մեծահասակներ, ուսանողներ)՝ դասընթացը և ծննդավայրը
- շարունակական կրթություն՝ դասընթացի, հաստատության, սեռի, տարիքի առումով (տարիքի մասին տվյալները հաղորդվում են ըստ հատուկ պահանջի)
- հանրությունը՝ ըստ գործունեության, կրթական ձեռքբերումների, տարիքի, սեռի, աշխատանքային կարգավիճակի, մասնագիտության, ծննդավայրի (տարեկան)
- գործազուրկներին՝ ըստ ծննդավայրի
- մեծահասկաների կրթության մեջ ընդգրկված հանրությունը՝ ըստ ծննդավայրի
- աշխատողներին՝ ըստ մասնագիտական ձեռքբերումների, գործունեության և սեռի

Խնդիրներ .

- ոչ մի տվյալ GDP-ում մեծահասկաների կրթության ընդլայնման մասին: Վերջին տվյալը՝ 1995թ.
- ոչ մի տվյալ NVQ-ի մասին,
- երբեմն անհամադրելի տարիքային խմբեր,
- միայն վերջին տվյալներ ուսումնառության տարբեր ոլորտներին (LFS) մասնակցութայն մասին,

- ոչ մի տվյալ չմասնակցելու համար պատճառների մասին՝ բացառությամբ մասնագիտական հետազոտության (մասնակցություն, AES, գրագիտություն)
- ոչ մի վիճակագրություն ողջ կյանքի ընթացքում ուսումնառությանը աշխատողների մասնակցության մասին,
- ոչ մի տվյալ շարունակական կրթությանը (ոչ ֆորմալ) մեծահասակների մասնակցության մասին

Եզրակացություն

Կոնֆերանսը գերազանց հնարավորություն ընձեռեց ՄԿԵԱ անդամ-երկրներին՝ ծանոթանալու Գործողությունների պլանին; ցույց տալու հիմնական գործողությունների հետ կապված լավ և հետաքրքիր փորձի օրինակներ, հետագա զարգացումների համար հանձնարարականներ և առաջարկներ պատրաստելու:

Այս իրադարձությունը ցույց տվեց, թե մեծահասակների կրթության ոլորտում Հանձնաժողովը և Քաղաքացիական հասարակությունն ինչպես կարող են միասին աշխատել՝ փորձաքննության արդյունքները քննարկելու համար: Գիտելիքներով փոխանակվելիս հիմնական ուշադրությունը հատկացվում էր այն հարցին, թե ինչպես կարող է լայն զանգվածի հետ աշխատանքը փոխանցվել քաղաքականության զարգացմանը, և թե ինչպես քաղաքականությունը կարող է արտահայտել մեծահասակներին դասավանդողների և սովորողների անհանգստությունը՝ կապված Եվրոպայում և նրա սահմաններից դուրս առավել լայն հնարավորությունների հետ:

ՄԿԵԱ-ն կշարունակի առաջին պլան մղել լավ փորձի օրինակները՝ հատկապես ոչ ֆորմալ կրթության ոլորտի փորձի օրինակները, դասընթացների հնարավորություններ կապահովի նաև անդամների համար, որպեսզի դիմի և ազդեցություն գործի Գործողությունների ծրագրի և ԵՀ մարտավարության շրջանակներում իրականացվող մեծահասկաների կրթության քաղաքականության զարգացումներին վրա:

Այս կոնֆերանսը կազմում էր ՄԿԵԱ աշխատանքային պլանի մի մասը, որն ընդգրկում է նաև Գորոծողությունների ծրագրի և Հանձնաժողովի հետ համագործակցության հիմնական գործողությունների հետ կապված հետագա իրադարձություններ: Ի հավելումն, ՄԿԵԱ-ն և նրա անդամները հաջորդ ամիսների ընթացքում ձեռնարկելու են առավել ընդգրկուն մի աշխատանք, որը կներառի թեմաների այնպիսի լայն դիապազոն, ինչպիսիք են ակտիվ քաղաքացիությունը և միջազգային զարգացումը:

Սյու Վեդդինգտոն
ՄԿԵԱ Նախագահ